

## ԽՄԱԳՐԱԿԱՆ

### Համաճարակէն Առաջ Եւ Ետք՝ Կը Մնանք Հաւատարիմ Մեր Նահատակներու Կտակին

Հայոց Յեղասպանութեան 105-ամեակը կը նշենք աշխարհը կլանած համաճարակի դժուարին պայմաններուն տակ: Ստեղծուած արտակարգ իրավիճակը ստիպած է մեզ առկախելու հրապարակային միջոցառումներն ու բողոքի ցոյցերը՝ Լոս Անճելըսէն մինչեւ Երեւան:

ՄԴՅԿ կը միանայ Հայկական Յեղասպանութեան 105-ամեակին առթիւ իրագործուող իւրայատուկ միջոցառումներուն եւ կ'ողջունէ Լոս Անճելոսահայ համայնքի կազմակերպութիւններու եւ կառոյցներու համախմբումն ու միասնականութիւնը:

Եղեռնի արհաւիրքը ապրած եւ ջարդի, կոտորածներու ու տեղահանութեան դաժան պայմանները տեսած ու ապրած Հայութեան համար ներկայ օրերու դժուարութիւնները անհամեմատելի են այն տառապանքներուն առջեւ, որ դիմակալեցին մեր նախնիները անցեալ դարասկիզբին՝ ենթարկուելով տեղահանութեան ու կոտորածներու:

Սփիւռքի տարբեր համայնքներէն ներս ծրագրուած առցանց միջոցառումները եւ մարդասիրական ծրագիրները կու գան փաստելու, որ Հայ ժողովուրդը կը մնայ հաւատարիմ իր նահատակներու կտակին ու կը շարունակէ պայքարը՝ անոնց յիշատակը վառ պահելու եւ արդարութիւնը վերականգնելու նպատակով: Անգամ մը եւս մենք կու գանք վերահաստատելու՝ «կը յիշենք ու կը պահանջենք» կարգախօսը:

Տիրող այս արտակարգ պայմանները մենք կ'օգտագործենք մարդասիրական նախաձեռնութիւններ ու ծրագիրներ իրականացնելու համար: 1.5 միլիոն կարիքաւորներու ճաշ սպասարկումով ու Ամերիկեան Կարմի Խաչի արիւնարշաւին մասնակցելով մեր երախտագիտութիւնը կու գանք յայտնելու Ամերիկացի ժողովուրդին եւ բարեսիրական կազմակերպութիւններուն, որոնք օգնութեան ձեռք մեկնեցին ցեղասպանութենէն վերապրողներուն ու հայ որբերուն:

Թրքական կառավարութիւնը կը շարունակէ իր ժխտողական քաղաքականութիւնը ու պատմութիւնը խեղաթիւրելու փորձերը: Սակայն, անցնող մէկ տարուայ ընթացքին Յեղասպանութեան ճանաչման աշխատանքները ստացան նոր թափ ու հայութեան յառաջ տարած հետեւողական պայքարը պսակուեցաւ նորանոր յաջողութիւններով: Ամերիկայի Միացեալ Նահանգներու Գոնկրէսի երկու պալատները՝ Ներկայացուցիչներու Տունը եւ Ծերակոյտը յաջորդաբար ճանչցան ու վերահաստատեցին Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը: Թրքական բողոքներն ու սպառնալիքները մնացին ապարդիւն ու Ամերիկեան վարչակազմի միջամտութիւններով հանդերձ, ժողովուրդի ընտրեալները մնացին անդրդուելի ու գրեթէ միաձայնութեամբ վաւերացուցին Յեղասպանութիւնը հաստատող բանաձեւերը:

Այս օրերուն, համայն հայութիւնը կը պայքարի համաճարակի դէմ: Մենք վստահ ենք որ, Հայաստանի եւ սփիւռքի տարածքին պիտի կարողանանք մարդկային ու տնտեսական նուազագոյն կորուստներով յաղթահարել այս հանգրուանը եւս ու գալ տարի դարձեալ պիտի բարձրանանք ծիծեռնակաբերդի յուշարձանը, պիտի ողողենք Լոս Անճելըսի, Պէրյուի մեր բողոքի ձայնը պիտի բարձրացնենք թրքական ժխտողական քաղաքականութեան դէմ՝ մինչեւ որ վերականգնի արդարութիւնը ու Հայ ժողովուրդը տիրանայ իր արդար իրաւունքներուն:

Մինչ այդ, մնանք առողջ ու ապահով:



# APRIL 24

## ARMENIAN GENOCIDE COMMEMORATION

A Special April 24 Commemorative program will air on most Armenian television stations and streamed online.

Stay tuned for program details and schedule.

OUR STORY IS YOUR STORY  
**WATCH / FOLLOW / SHARE**

### Հայոց Յեղասպանութեան Ոգեկոչման Լոս Անճելոսի Յանձնախումբերու Միացեալ Յայտարարութիւնը

Հայոց Յեղասպանութեան Ոգեկոչման Լոս Անճելոսի Միացեալ Մարմինը, Միացեալ Հայ Երիտասարդները եւ Հայոց ցեղասպանութեան յանձնախումբ միաւորը, որոնք պատասխանատու են Հարաւային Գալիֆօրնիոյ մէջ Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակի միջոցառումները կազմակերպելու, նկատի առնելով «քորոնա» ժահրի պատճառով զանգուածային հաւաքներու տեղական եւ նահանգային իշխանութիւններու կողմէ կիրառուած առողջապահա-

կան հրահանգները, միասնաբար կը յայտարարեն իրենց փոխընտրական ծրագիրները

Աւանդութիւն դարձած Մոնթեպելլոյի Յուշարձանին մօտ հայոց ցեղասպանութեան ոգեկոչումի, Հոլիվուտի Փոքր Հայաստան թաղամասի քայլարշաւի եւ Լոս Անճելոսի Թրքական հիւպատոսութեան դիմաց բողոքի ցոյցի փոխարէն, աշխատանք կը տանին համաքաղութային ծրագիրը, Ապրիլ 24,

Շար.ը էջ 7

### Վարչապետը, Իր Ուղերձի Նկարահանման Արտահոսքի Հետ Կապուած Միջադէպը Որակեց՝ «խայտառակ»

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Ապրիլ 19-ի ուշ երեկոյեան, անդրադարձաւ իր ուղերձի նախապատրաստական աշխատանքներու նկարահանումներու արտահոսքին: Փաշինեանի ուղիղ եթերէն առաջ ունեցած փորձերը խմբագրուած են ծաղրական բնոյթով եւ հրապարակուած է ընկերային ցանցերուն վրայ: Ֆէյսպուքի ուղիղ եթերի ընթացքին, Փաշինեան տեղի ունեցածին «խայտառակ» որակումը տուաւ եւ ըսաւ թէ զարմացած է որոշ արձագանգներէն. «Էդ վատ երեւոյթը դրա հեղինակների մասին է, ոչ թէ այն ամէն ինչի մասին, ինչ որ երեւում է նկարահանումում, որովհետեւ նկարահանումում ի՞նչ է երեւում, նկարահանումում երեւում է սովորական աշխատանքային մի իրավիճակ»:

Երկուշաբթի, Ապրիլ 20-ի երեկոյան Վարչապետ Նիկոլ Փաշինեան դարձեալ Ֆէյսպուքեան ելոյթ ունենալով յայտարարեց, որ



Վարչապետ Նիկոլ Փաշինեան ուղիղ սփռումը սկսելէ առաջ

Հայաստանի մէջ «մեծ հիասթափութեան» ապրողներու շրջանակէն ներս, առաջին հերթին նախորդ իշխանութեան ներկայացուցիչներն են:

Շար.ը էջ 6

**ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ**

# Լաւրովի Կոշտ Ակնարկը Բաքուին. Ահա Թէ Ինչու Չպէտք Է Սառեցնել Ապրիլեանի Զարցը

ԱՐԱՍ ԱՄՍՏՈՒՆԻ

ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լաւրովը Ապրիլի 21-ին մասնակցել է Գորչակովի հիմնադրամի կազմակերպած կլոր տեսասեղանին՝ այնտեղ խօսելով արցախեան հարցի մասին եւ յիշատակելով ՄԱԿ Ապահովութեան խորհուրդի յայտնի բանաձեւերը: Լաւրովը նշել է, թէ դրանք ի հարկէ պարունակել են Ադրբեյջանի տարածքային ամբողջականութեան դրոյթ, բայց նաեւ անհրաժեշտ են համարել պատերազմի դադարեցումն ու բանակցութիւնը: Ըստ Լաւրովի՝ դրանից յետոյ եղել է բանակցային մի քանի փուլ, պայմանաւորուելու մի քանի փորձ, եւ այժմ առկայ է Երեւան-Բաքու բանակցային ձեւաչափը, որի շրջանակում էլ փորձ է արւում գտնել խաղաղ լուծում: Ըստ նրա՝ այդ լուծումը պէտք է լինի փուլային: Լաւրովը խօսել է Մարտի 18-ի սկզբունքների մասին:

«Այնպէս որ, ես վստահ եմ, որ երբ մենք հասնենք փաստաթղթերի ստորագրման մասին որոշման՝ դա կը լինի ՄԱԿ Ախ-ի բանաձեւերի ուղղութեամբ կարեւոր քայլ, որոնք պահանջում էին դադարեցնել պատերազմն ու սկսել պայմանաւորուել: Հիմա պէտք է պայմանաւորուել, եւ հէնց դրան մենք փորձում ենք հասնել Միասնի խմբի համանախագահներով»,- ըստ «Արմինֆոյ» գործակալութեան՝ ասել է ՌԴ արտգործնախարարը:

Լաւրովն անում է հետաքրքիր եւ բազմիմաստ յայտարարութիւն մի թեմայով, որը շատ է խաղարկում Բաքուն՝ ՄԱԿ Ախ-ի բանաձեւեր: Բաքուն շեշտադրում է դրանց այն դրոյթը, որ «հակահայկական ուժերը պէտք է դուրս գան ադրբեյջանական տարածքներից»: Բայց այդ իմաստով Լաւրովը Բաքուին բաւականին թափանցիկ ակնարկով յիշեցնում է, որ դրա պայման է եղել այն, որ Բաքուն դադարեցնի պատերազմը Արցախի դէմ: Բաքուն չի կատարել պայմանը: Փաստացի Ադրբեյջանը պայմանը չի կատարել առ այսօր, որովհետեւ

թէեւ ներկայումս չկայ ուղղակի լայն գործողութիւն, բայց թէ՛ ապրիլեան քառօրեան ցոյց տուեց, թէ՛ Ադրբեյջանի պահուածքն է ցոյց տալիս ընդհանուր առմամբ, որ Բաքուն չի դադարեցրել հայերի դէմ պատերազմը: Ըստ այդմ՝ Լաւրովը Բաքուին ակնարկում է, որ փաստաթղթային մնացեալ հանգամանքները վերածուած են դիւանագիտական «գեղղամների»:

Միւս կողմից՝ խօսելով այն մասին, որ պատերազմը դադարեցնելը եղել է պայման, Լաւրովը նշում է, թէ հիմա պէտք է պայմանաւորուել: Ինչ է դա նշանակում: Արդեօք ՌԴ արտգործնախարարը ներկայիս վիճակը համարում է պատերազմի դադարեցում եւ, ըստ այդմ, դիտարկում, որ Բաքուն կատարել է իր քայլը, եւ ուրեմն հերթը Երեւանինն է:

Յամենայն դէպս, այդ տեսանկիւնից ՌԴ արտգործնախարարի յայտարարութիւնը, մեղմ ասած, բազմիմաստ է, եւ այդ հանգամանքը վկայում է, որ Ռուսաստանն արցախեան հարցում, այսպէս ասած, քայլում է լարի վրայ, եւ բաւական է փոքր-ինչ բաց թողնել հայկական կողմից, եւ Ռուսաստանն անմիջապէս թեքուելու է դէպի իր համար հոգեհարազատ դարձած ադրբեյջանա-թուրքական ուղղութիւնը: Թեքուելու է, թէ թեքելու են որոշ խմբեր՝ սա, ի հարկէ, հարց է, բայց դա մեծ հաշուով լինելով հարց նաեւ մեզ համար՝ մեր գլխաւոր հարցը չէ, այլ Ռուսաստանի: Մեր գլխաւոր հարցն է թոյլ չտալ, որ Մոսկուան արձանագրի, թէ Բաքուն կատարել է պայմանը, ուրեմն հերթը հայերինն է:

Ահա թէ ինչու ապրիլեան քառօրեայ պատերազմի հարցը քաղաքական հարթութիւնում չի կարելի սառեցնել ոչ մի պահ եւ առաւել եւս չէր կարելի սառեցնել հիմա, երբ Լաւրովի խօսքերը եւ ստորագրելը վկայում են, որ ստորջրեայ գործընթացը քնած չէ, եւ վտանգի համար բաւական է, որ Հայաստանը թարթի աչքը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

## Հանրային Զեռուստաընկերութեան Նոր Դեկավարների Զարցն Ու Գեղական Կարգը

ՀՀ վարչապետի տեսաուղերձի հեռարձակման ընթացքում տեղի ունեցած միջադէպից յետոյ Հանրային հեռուստաընկերութեան գործադիր տնօրէն Մարգարիտա Գրիգորեանի հրաժարականից յետոյ, իրենց դիմումների համաձայն՝ զբաղեցրած պաշտօններից ազատուել են նաեւ լրատուական ծառայութեան տնօրէն Պետրոս Ղազարեանը եւ հեռուստաընկերութեան պրոդիւսեր Վարդան Յակոբեանը:

Պորհուրդը Հանրային հեռուստաընկերութեան գործադիր տնօրէնի ժամանակաւոր պաշտօնակատար է նշանակել Հանրային հեռուստաընկերութեան ստեղծագործական հարցերով տնօրէնի տեղակալ Արմէն Սարգսեանին:

Լրատուական ծառայութեան տնօրէնի ժամանակաւոր պաշտօնակատար է նշանակուել տնօրէնի տեղակալ Ռուբեն Շահինեանը: Առաջիկայումս Պորհուրդը կը ձեւ-

աւորի մրցութային յանձնաժողով եւ կը յայտարարի մրցոյթ Հանրային հեռուստաընկերութեան գործադիր տնօրէնի պաշտօնի համար:

Դէ ինչ, միջադէպի հիմնական պատասխանատուները դուրս մնացին Հանրային հեռուստաընկերութիւնից: Թէպէտ այնքան էլ պարզ չէ, թէ Պետրոս Ղազարեանը ինչ կապ ունէր միջադէպի հետ, աւելի հաւանական է, որ ոչ մի կապ, պարզապէս ինքն էլ է այս միջադէպի «ալիքի» տակ ընկել:

Ինչեւէ, այժմ Հայաստանի գլխաւոր հեռուստատեսութիւնը պէտք է նոր տնօրէն ունենայ: Բայց շատ աւելի կարեւոր է, որ Հանրային վերջապէս դադարի պետական քարոզչամեքենայ լինել եւ իր անուանը համահունչ գործունէութիւն իրականացնի: Այն է՝ դառնալ հանրութեան հարթակը, նրա միջոցով վեր հանուեն երկրի առաւել կարեւոր հիմնախնդիրները, եւ խօսքը ոչ միայն ներկայիս, այլեւ՝

## Համաճարակի Դեմ Պայքար. Կոնսենսուս Մինուս...

Կորոնավիրուսային համաճարակի դէմ պայքարում հնարաւոր է յաջողութիւնների հասնել միայն միասնական ջանքերով, եւ Հայաստանում, մեծ հաշուով, այդ միասնութիւնը կայ: Համաճարակի դէմ պայքարում են իշխանութիւնները՝ ինչքան թոյլ են տալիս պետութեան հնարաւորութիւնները, բժիշկները, ովքեր շաբաթներով տան երես չեն տեսնում, ուսուցիչները՝ հեռաւար դասեր անցկացնելով, զինուորականները՝ ամուր պահելով սահմանները, գիւղացիներն ու ֆերմերները, ովքեր զբաղւում են դարնանային վարուցանքով, էքստրեմալ պայմաններում աշխատող վարորդները, ենթակառուցումաշինարարների անխափանութիւնն ապահովողները, պարէնային խանութների աշխատակիցները, մի խօսքով՝ պայքարում են բոլոր նրանք, ովքեր անում են ամէն ինչ, որ մարդկանց առօրեան հնարաւորինս քիչ շեղուի սովորական ընթացքից: Բազմաթիւ գործարարներ մեծ ու փոքր բարեգործական ծրագրեր են իրականացնում՝ հարկ չհամարելով բարձրաձայն խօսել դրանց մասին, կամաւորներն ինչով կարողանում՝ օգնում են անապահովներին, համաճարակի դէմ պայքարում են նոյնիսկ նրանք, ովքեր պարզապէս տանն են մնում՝ դիմանալով տնից դուրս գալու գայթակղութեանը...

Իսկ ովքեր չեն մասնակցում այդ պայքարին, ընդ որում՝ չեն մասնակցում ցուցադրաբար: Այո, նախկին իշխանութիւնները: Աւելի ճիշտ՝ նախկին բարձրաստիճան պաշտօնեաները (նրանք, ովքեր դեռ Հայաստանում են): Օրէնքով նրանք, ի հարկէ, համաճարակի դէմ պայքարին մասնակցելու որեւէ պարտաւորութիւն չունեն, բայց գոյութիւն ունեն նաեւ չգրուած օրէնքներ եւ բարոյական նորմեր, ու խօսքը հէնց դրանց մասին է: Որեւէ մէկը չի կասկածում, չէ, որ Հայաստանում առնուազն 10-15 նախկին բարձրաստիճան պաշտօնյալ կայ, որոնց համատեղ ունեցումաձքը ՀՀ տարեկան բիւջէից մեծ է: Նրանցից քանիսն են այս ընթացքում թէկուզ հազար դրամի աջակցութիւն ցուցաբերել այն ժողովրդին, որի ծանր վիճակով իբր ահաւոր մտահոգուած են: Փոխարէնը՝ ահաւելի գումարներ են տրամադրում քարոզչամիջոցներին ու յանձնարարում գիշեր-ցերեկ քարկոծել կառավարութեան գոր-

ծունէութիւնը, ծաղրել կառավարութեան իրականացրած աջակցութեան ծրագրերը, թէ ինչպէս են դրանք փոշիացուած՝ առանց լուրջ հարցեր լուծելու, թէ քանի հազար ընտանիքի կարելի էր օգնել պաշտօնեաների պարգեւավճարների փողերով, եւ այլն: Խօսքն այն մասին չէ, թէ իսկ քանի հազար ընտանիքի կարելի էր օգնել այդ քարոզչամիջոցներին տրամադրուող գումարներով: Եւ ընդհանրապէս՝ խօսքը փողի մասին չէ. առանց այդ թալանած միլիարդների ու դրանց տէրերի աջակցութեան էլ մենք կը յաղթահարենք այս դժուարութիւնները, եւ ամէն ինչ լաւ կը լինի: Խօսքն այն մասին է, որ այդ մարդիկ պարզապէս վրէժ են լուծում պետութիւնից ու ժողովրդից: Սրանցից մի քանիսն անգամ հրաժարուեցին իրենց «հալալ քրտինքով կառուցած» հիւրանոցները յատկացնել պարէտատանը՝ անհրաժեշտութեան դէպքում քաղաքացիների մեկուսացումն ապահովելու համար, թէեւ պետութիւնը դա ձրի չէր վերցնելու, լաւ էլ վճարելու էր: Այս սա է նրանց իրական դէմքը: Այդ մարդիկ վրէժ են լուծում ոչ միայն իշխանութիւններից, այլեւ ժողովրդից, որն իրենց մերժել է, ու հիմա մի կողմ քաշուած՝ չարախնդում են համաճարակի դէմ պայքարում բոլորի ջանքերի միաւորման փորձերի վրայ: Որովհետեւ կոնկրետ այս դէպքում իսկապէս մի կողմում համարեայ բոլորն են, միւս կողմում այդ 10-15 հոգին՝ իրենց մերձաւորներով ու վարձկաններով:

« ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ »



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐՈ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱՎԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՅԷ ԱՏԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

# ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## ԵՈՒՐԻ ԽԱՀԱՏՈՒՐՈՎՐ ՊԵՏՐ Է ԻՐ ՄԷջ ՈՒժ ԳՈՒՆԷ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՆԱՅ ՔՈՆԻԶ ՅԱՆԾՆԱԺՈՂՈՎ ԱՆՈՐԱՆԻԿ ՔՈՇԱՐԵԱՆ

Ապրիլ 20-ի Ազգային ժողովի ճեպագրության ժամանակ, «Իմ քայլը» խմբակցության պատգամաւոր՝ 2016 թուականի Ապրիլին ծաւալուած ռազմական գործողութիւններու հանգամանքները ուսումնասիրող քննիչ յանձնաժողովի նախագահ՝ Անդրանիկ Քոչարեանին հարցուցին.- չէ՞ք պատրաստուիր յանձնաժողով կանչել վարչապետ Նիկոլ Փաշինեանը, հասկնալու, թէ Ռուսաստանի Գաշնութեան դերակատարութիւնը որն էր այդ պատերազմին: Ան պատասխանեց. «Այս պահի դրութեամբ յանձնաժողովի քննարկումների արդիւնքում մենք չենք տեսել, որ պէտք է կանչել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանին միայն այն պարզ պատճառով, որ Նիկոլ Փաշինեանն այդ ժամանակ չի եղել իշխանութեան կրող: Եթէ նա որեւէ տեսակէտ է յայտնել, այդպիսի տեսակէտներ արտայայտել են նաեւ շատ քաղաքական գործիչներ»:



Ապրիլեան պատերազմի հանգամանքները ուսումնասիրող քոնիչ յանձնաժողովի նախագահ՝ Անդրանիկ Քոչարեան

գլխաւոր հրամանատարութեան նախկին պետ ԵՈՒՐԻ ԽԱՀԱՏՈՒՐՈՎԻ գալը. «Սերժ Սարգսեանը համոզուեց, որ յանձնաժողովում քաղաքական դրդապատճառներով որեւէ հարց չի տրուել, տրուել են միայն մասնագիտական, ճիշդ հարցադրումներ, որոնց իրաւասու է պատասխանել այդ ժամանակուայ գերագոյն գլխաւոր հրամանատարը: Մեր աշխատանքը շատ աւելի լիարժէք կը լինի, եթէ համար մէկ զինուորական իր մէջ ուժ գտնի գալ յանձնաժողով: Եթէ ինքը իր մէջ ուժ է գտել եւ գնացել է ինչ-որ ֆիլմում տեսակէտներ է ասել, իսկ այդ ֆիլմը իրաւական առումով որեւէ արժէք չի ներկայացնում, եթէ կարողացել է ֆիլմում նկարագրել իրողութիւններ, պէտք է կարողանայ նաեւ սահմանադրութեան պահանջով ստեղծուած քննիչ յանձնաժողովի աշխատանքներին մասնակցել: Եւ թէկուզ այդ նոյն բաները գալ յանձնաժողովում ասի եւ պատրաստ լինի լսել յանձնաժողովի անդամների արհեստավարժ հարցադրումները, որը տեսաւ նաեւ այն ժամանակուայ իր հրամանատար Սերժ Սարգսեանը»:

Անդրանիկ Քոչարեան ըսաւ, որ արծարծուած տեսակէտները կ'ուսումնասիրեն ու եթէ կարիք ըլլայ ձգտելու, կը դիմեն այն մարմիններուն, որոնք իրաւասու եղած են, անոնք են Պաշտպանութեան Բանակն է, Պաշտպանութեան Նախարարութիւնն է:

Լրագրողները նաեւ հարցուցին՝ դուք ըսիք, որ հետախուզութեան հետ կապուած ինդիւիդներ եղած են, կը պատրաստուի՞ք նորէն կանչել Արշակ Կարապետեանը, որ ապրիլեան դէպքերու ժամանակ եղած է ՀՀ Զինուած Ուժերու գլխաւոր հետախուզական վարչութեան պետ:

Անդրանիկ Քոչարեան պատասխանեց. «Եթէ յանձնաժողովը դրա կարիքը գտնի, կը կանչի, որովհետեւ ինքներդ էլ հասկանում էք, որ Սերժ Սարգսեանին լսելուց յետոյ յանձնաժողովում նորից կարծիքներ կարող են լինել, որ այն զինուորականները, որոնք եղել են, նորից կարող է հարցերի պատասխաններն»:

Այդ առումով Քոչարեան կարեւոր համարեց Զինուած Ուժերու

## Մայր Աթոռը Համաձայն Չէ Վարչապետի Տուած Գնահատականներուն Ու Տեսակետներուն

Մայր Աթոռի տեղեկատուական համակարգը անդրադարձած է վարչապետ Նիկոլ Փաշինեանի երէկուայ ըրած յայտարարութիւններուն, հոգեւորականութեան վերաբերող:



«Վարչապետը ի շարս այլ հարցերի անդրադարձ կատարեց նաեւ հոգեւորականութեանը՝ յընթացս որակումներ ու գնահատականներ հնչեցնելով նրանց գործունէութեան վերաբերելով:

Այս օրերին, երբ մեր ժողովուրդը պատրաստուում է աղօթքով իր խոնարհումը բերելու Հայոց Յեղասպանութեան սուրբ նահատակների յիշատակի առջեւ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, չհամաձայնելով հանդերձ տրուած գնահատականներին ու արտայայտուած տեսակէտներին, այս պահին ձեռնպահ է մնում անդրադառնալ վերջիններս», - նշուած է յայտարարութեան մէջ:

Ըստ այդ յայտարարութեան, Յեղասպանութեան նահատակներու յիշատակի օրուայ նախաշեմին՝ Գրեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսի հայրական յորդորն է,

«գերծ մնալ հակառակութիւններից ու շահարկումներից եւ սիրոյ, համերաշխութեան ու միաբանութեան ոգով հայցել բարեխօսութիւնը մեր սուրբ նահատակների՝ ի նպաստ հայրենիքի զօրացման, համագգային կեանքում առկայ մարտահրաւէրների յաղթահարման եւ մեր ժողովրդի բարօրութեան»:

Վարչապետը, մասնաւորապէս, ըսած էր.- «Հայաստանում ակնյայտ է դառնում, որ հոգեւոր կեանքն արժէքների եւ գաղափարների սերմանման մեծ բացեր ու հարցեր ունի, որն էլ առաջացնում է հոգեւորականութեան շրջանում լրջագոյն հիասթափութիւն»:

## Հրաժարած ԵՆ Հ1-ի Ղեկավարներ՝ Մարկարիթա Գրիգորեանը Եւ Պետրոս Ղազարեանը



Մարկարիթա Գրիգորեան



Պետրոս Ղազարեան

Վարչապետ Փաշինեանի ուղիղ եթերի նախապատրաստական նկարահանումներով խմբագրուած, ծաղրական բնոյթի տեսանիւթի մը հրապարակումէն ետք իրենց հրաժարականները ներկայացուցին Հանրային հեռուստաընկերութեան գործադիր տնօրէն՝ Մարկարիթա Գրիգորեան եւ լրատուական բաժինի տնօրէն Պետրոս Ղազարեանը:

Իր հրաժարականի մէջ Մարկարիթա Գրիգորեան ըսած է.- «Ինձ համար անընդունելի է ՀՀ վարչապետի՝ եթերից առաջ տեսագրուած հրապարակումը եւ անկեղծօրէն վրդովուած եմ գործընկերային, բարոյական սկզբունքների խախտման էժանագին այս քայլից: Ինքս տարիներ շարունակ ենթարկուել եմ նմանօրինակ լրատուական գրոհների եւ հասկանում

եմ, թէ ինչ է նշանակում թիկունքին հասցրած հարուածը»:

Ան շեշտած է, թէ կը կիսուի կատարուածի պատասխանատուութիւնը:

Իրենց դիմումին համաձայն՝ զբաղեցրած պաշտօններէն ազատուած են նաեւ լրատուական ծառայութեան տնօրէն Պետրոս Ղազարեանը եւ հեռուստաընկերութեան բեմադրիչներէն՝ Վարդան Յակոբեանը: Լրատուական ծառայութեան տնօրէնի ժամանակաւոր պաշտօնակատար է նշանակուել տնօրէնի տեղակալ Ռուբէն Շահինեանը: Առաջիկայում Խորհուրդը կը ձեւաւորի մրցութային յանձնաժողով եւ կը յայտարարի մրցութ Հանրային հեռուստաընկերութեան գործադիր տնօրէնի պաշտօնի համար», - նշուած է յայտարարութեան մէջ:

## Միջազգային Կառոյցներու Համաձայն Հայաստան Պիտի Ունենայ Ամենայաջող Տնտեսական Հեռանկարը Հարակովկասի Մէջ

Միջազգային ելեւմտական հեղինակաւոր կառոյցներու համաձայն, թէեւ հարակովկասեան երեք երկիրներու մէջ տնտեսական աճի դանդաղում կամ անկում կը սպասուի, ինչպէս ամբողջ աշխարհի մէջ, սակայն Վրաստանի ու Ատրպէյճանի համեմատ Հայաստանն այս տարի պիտի ունենայ աւելի յաջող տնտեսական հեռանկար:

Ասիական զարգացման դրամատան՝ այս Ապրիլին հրապարակած գնահատականի համաձայն, Հայաստանը տարին պիտի փակէ 2,2 տոկոս տնտեսական աճով, Ատրպէյճանը՝ 0,5, իսկ Վրաստանը՝ 0 տոկոս:

Համաշխարհային դրամատան կանխատեսումը աւելի համեստ էր 2020-ին Հայաստանը պիտի ունենայ 1,7 տոկոս տնտեսական աճ, Վրաստանը՝ 0,1 տոկոս աճ, այնինչ Ատրպէյճանի մէջ անկում պիտի գրանցուի՝ 0,2 տոկոս:

Արժույթի միջազգային հիմնադրամի գնահատականները աւել-

լի խիստ են. հարակովկասեան երեք պետութիւններու մէջ ալ տնտեսական անկում կը սպասուի՝ Հայաստանի մէջ 1,5 տոկոս, Ատրպէյճանի մէջ 2,2 տոկոս, իսկ Վրաստանի մէջ 4 տոկոս:

Ազգային ժողովի իշխող Իմ քայլը խմբակցութեան պատգամաւոր, տնտեսագէտ Արտակ Մանուկեանի խօսքով, այս թիւերը կը վկայեն, թէ որքան արդիւնաւէտ է Հայաստանի իշխանութիւններու վարած տնտեսական քաղաքականութիւնը - «Վրաստանի տնտեսութիւնը շատ աւելի մեծ կախուածութիւն ունի զբօսաշրջային հոսքերից, քան Հայաստանի տնտեսութիւնը: Եւ այս շրջաժիրից ներս պարզ է, որ քանի որ առնուազն ակնյայտ է, որ զբօսաշրջութիւնը լինելու է թերեւս ամենախոցելի ոլորտներից մէկը: Այս առումով Հայաստանը, մշակող արդիւնաբերութեան ոլորտում արձանագրուած առաջանցիկ քայլե-

րի շնորհիւ, որոշակիօրէն տնտեսութեան կառուցուածքը փոխել էր, եւ ինչ-որ առումով նաեւ տեսակաւորուեց էր: Իսկ Ատրպէյճանի պարագայում ակնյայտ այստեղ նաւթի գնի դրածօնը կայ»:

Հայաստանի այս տարուան պետական պիւլտնէին համաձայն,

2020-ին երկիրը պէտք է գրանցէր 4,9 տոկոս տնտեսական աճ: Իշխանութեան ներկայացուցիչները թէեւ դեռ նոր թիւ չեն հրապարակած, սակայն նշած են, որ ընթացիկ տարուան տնտեսական ցուցանիշները էականօրէն ցած պիտի ըլլան նախատեսուածէն:

# ԼՈՒՐԵՐ

## Ձոհրապ Մնացականեան Պատասխանած Է Նախարար Լաւրովի Յայտարարութեան



Արտաքին գործոց նախարար Ձոհրապ Մնացականեան մամլոյ ասուլիսի ընթացքին

Հայաստանի Արտաքին գործոց նախարար Ձոհրապ Մնացականեան Ապրիլ 21-ի մամլոյ ասուլիսին, արձագանգած է Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովի յայտարարութիւններուն, ըստ որոնց՝ Հայաստանն ու Ատրպէյճանը կը քննարկեն Ղարաբաղի շուրջ փոփոխութիւններու մասին փաստաթուղթ:

«Ես էլ եմ լսել այդ յայտարարութիւնը կամ մեկնաբանութիւնը, կ'ասեմ հետեւեալը՝ այս երկու տարիներէ ընթացքում մեր կառավարութիւնը, մենք, վարչապետ Փաշինեանը եղել ենք առաւել քան թափանցիկ եւ մեր դիրքորոշումները, մեր մտեցումներն արտայայտել ենք շատ պարզ ձևով: Հիմա աւելի ճշտօրիտ՝ այո, այդ մեկնաբանութեան մէջ եղել են յղումներ բազմաթիւ փաստաթղթերի, սկսած Քի Ուեսթից մինչեւ վերջերս, խօսքը գնացել է նաեւ, թէ ինչ փաստաթղթի մասին է խօսքը այս երկու տարուայ ընթացքում:

Եկէք լինենք շատ յստակ, նման մտեցումներ ի յայտ են եկել 2014 թուականին, 2016 թուականին եւ այդ մտեցումներն ընդունելի չեն եղել հայկական կողմերի համար: 2018 թուականից ի վեր քննարկումները սահմանափակուել են առանձին տարրերի շուրջ կողմերի մտեցումների քննարկման, գնահատման վերաբերեալ», - ըսած է Մնացականեան:

Արտաքին Գործոց նախարարի խօսքով, 2014-ին առաջարկուած տարբերակը այսօր բանակ-

ցային սեղանի փաստաթուղթ չէ: «Մենք առաւել քան յստակ խօսել ենք մեր դիրքորոշումների մասին, որտեղ ընդգծուած առաջնային գերակայութիւն է հայկական կողմերի համար անվտանգութեան բաղադրիչը: Այն, ինչ վերաբերում է տարածքներին, ինչպէս նշուել է մեկնաբանութեան մէջ, ամէնից բացի դա անվտանգութեան գոտի է եւ պաշտպանական գծեր: Որեւէ կերպ, որեւէ հայկական կողմ չի կարող ենթադրել նոյնիսկ, որ հնարաւոր է վերանայել դա՝ վտանգի տակ դնելով Արցախի բնակչութեան անվտանգութիւնը: Որեւէ կերպ անհնար է ենթադրել, որ հայկական կողմերից որեւէ մէկը կարող է գնալ գիշումներ, որոնք կարող են վտանգի տակ դնել Արցախի բնակչութեան անվտանգութիւնը»:

«Երկրորդ կարեւորագոյն տարրը, որ հիմնական սկզբունքների մէջ գոյութիւն ունի, ինքնորոշման սկզբունքն է, որը հայկական կողմերի համար առաջնային, գերակայ տարրն է այս բանակցային գործընթացում: Դա արտայայտուում է բազմիցս նշել ենք՝ անվտանգութեամբ եւ ներկայ «Ստատուս բո» իրավիճակով ու հիմա բաց կերպով ասում եմ՝ ինքնորոշման իրաւունքի արտայայտումը նշանակում է իրավիճակի յստակացում, ազատ կամարտայայտութեան իրաւունքը առանց սահմանափակումների: Խաղաղ կարգաւորումը հնարաւոր է փոխգիշումների միջոցով, գիշումներ չեն եղել եւ չեն լինելու»,- ըսած է ՀՀ Արտաքին Գործոց նախարարը:

## Մարտին Գալստեանն Ընտրուած Է Կեդրոնական Դրամատան Նախագահ

Ազգային ժողովը, Ապրիլ 17-ին, Մարտին Գալստեանը ընտրած է Կեդրոնական դրամատան նախագահ: Փակ, գաղտնի քուէարկութեան մասնակցած 119 պատգամաւորներէն «Իմ քայլը» խմբակցութեան առաջադրած թեկնածուի օգտին ձայն տուած են 104-ը, դէմ՝ 15-ը:


Մարտին Գալստեանը 2018 թուականէն Կեդրոնական դրամատան խորհուրդի անդամ է: Երեւանի Պետական համալսարանին մէջ ստացած է տնտեսագիտութեան թեկնածուի աստիճան, որպէս մագիստրոս ստրված է Հարուրտի համալսարանի ձոն Քենըտի անուան Կառավարման դպրոցը, կը դասաւանդէ Հայաստանի Ամերիկեան համալսարանին մէջ:

2008 թուականէն Կեդրոնական դրամատան նախագահի պաշ-



Կեդրոնական դրամատան նորընտիր նախագահ Մարտին Գալստեան տօնը զբաղցնող Արթուր Զաւարեանի պաշտօնավարման ժամկէտը կը լրանայ Յունիսին:

## Լրագրողներ Առանց Սահմաններու. «Լրատուական Բազմազանութիւնը Զայաստանի Մէջ Կը Ծաղկի»



Աշխարհի 180 պետութիւններու շարքին, մամուլի ազատութեան մակարդակով Հայաստանը 61-րդ տեղն է՝ Վրաստանի, Լեհաստանի եւ Խրուաթիոյ հետ գրեթէ նոյն մակարդակի վրայ:

Այդ կը վկայեն աշխարհի ամենահեղինակաւոր լրագրողական կառույցներէն մեկուն՝ «Լրագրողներ առանց սահմաններու» կազմակերպութեան հրապարակած տարեկան զեկոյցի տուեալները:

«Մամուլի ազատութիւնը աշխարհին մէջ 2020 թուականին» վերնագրուած այս փաստաթուղթը, ընդհանուր առմամբ դրական գնահատած է Հայաստանի լրատուական տիրոջ մթնոլորտը, զեկոյցի հեղինակները զայն բնութագրած են «Բազմազան, բայց դեռեւս ոչ անկախ»:

«Լրատուական բազմազանութիւնը երկրին մէջ կը ծաղկի, սակայն Հայաստան 2018 թուականին տեղի ունեցած «Թաւշեայ յեղափոխութենէն» յետոյ ձեւաւորուած կառավարութիւնը չէ կարողացած յղթահարել լրատուական դաշտի առկայ բեւեռացումը», - նշած են զեկոյցի հեղինակները, աւելցնելով, - «Երկրին մէջ գործող հիմնական հեռուստատիւներու խմբագրական քաղա-

քականութիւնը կը համընկնի անոնց սեփականատէրերու շահերուն: Դեռ շատ ընելիք կայ լրագրողական անկախութեան եւ լրատուամիջոցներու պատկանելիութեան շուրջ, թափանցիկութեան հասնելու համար»:

«Յետաքննական լրագրութիւնը [հայաստանեան] համացանցէն ներս կը ծաղկի, լուրջ տեղ զբաղեցնելով քրուտփցիայի դէմ պայքարի համապետական արշաւին մէջ», - նշած են զեկոյցի հեղինակները:

Աւելցնենք, որ «Լրագրողներ առանց սահմաններու» կազմակերպութեան այս զեկոյցին մէջ Հայաստանը արդէն երկրորդ տարին է, որ 61-րդ տեղը կը գրաւէ: 2018-ին՝ Հայաստանը 80-րդն էր:

Ինչ կը վերաբերի Ատրպէյճանին, ապա այս երկիրը մամուլի ազատութեան մակարդակով կը շարունակէ ոչ միայն տարածաշրջանին, այլեւ աշխարհի ետնապահներէն մէկը մնալ: «Լրագրողներ առանց սահմաններու» կազմակերպութեան գնահատումով, լրատուամիջոցներու ազատութեան մակարդակով Ատրպէյճանը կը գրաւէ 168-րդ տեղը: Նախորդ տարուայ համեմատ Ատրպէյճանը նահանջած է եւս երկու հորիզոնականով:

## Սահացած Է Դիւանագետ, Պետական Գործիչ Ռուբէն Շուկարեանը

Մահացած է դիւանագետ, պետական գործիչ՝ Ռուբէն Շուկարեան: Ֆէյսպուքեան իր էջին վրայ հաստատած է տեղեկութիւնը իր որդին՝ Նարեկ Շուկարեան:

«Մեծ ցաւով կը յայտնենք, որ այսօր (Ապրիլ 21-ին) առաւօտեան Պոսթըն Մեսեսչուսեցի մէջ, կեանքէն հեռացաւ Ռուբէն Շուկարեանը», - գրած է ան: Կը նշուի, որ Ռուբէն Շուկարեան նախորդ շաբաթ կաթուած եղած էր:

Արտաքին գործոց նախարարութեանէն յայտնած են.-

«Խորը վշտով յայտնում ենք, որ ապրիլի 21-ին կեանքից վաղաժամ հեռացաւ ՀՀ պետական եւ քաղաքական գործիչ, դիւանագետ, դասախօս եւ գիտնական, մեր սիրելի գործընկեր Ռուբէն Շուկարեանը:

Պարոն Շուկարեան մեծ աւանդ ունեցած է ՀՀ դիւանագիտական ծառայութեան համակարգի կայացման գործում: Դիւանագէտի բազմամեայ գործունէութեան ընթացքում նա իր մասնագիտական բարձր պատրաստուածութեամբ, նուիրուածութեամբ եւ մարդկային որակներով կարողացել է լաւագոյնս ներկայացնել Հայաստանի ազգային շահերը եւ առաջ մղել ՀՀ արտաքին քաղաքական գերակայութիւնները: Դրա ար-



Նախկին դեսպան Ռուբէն Շուկարեան

դիւնքն են եղել ԱՄՆ-ի, եւրոպական մի շարք երկրների հետ երկողմ յարաբերութիւնների զարգացման եւ մի շարք այլ ուղղութիւններով զբաղման ձեռքբերումները:

Մեր խորին ցաւակցութիւնն ենք յայտնում պարոն Շուկարեանի ընտանիքի անդամներին, հարազատներին եւ բոլոր նրանց, ովքեր սգում են նրա կորուստը: Նոր լուսաւոր մարդկային եւ փայլուն դիւանագէտի կերպարը մշտապէս վառ կը մնան մեր յիշողութիւններում:

# Նաւասարդ Արքեպիսկոպոս Կճոյեան Կը Մեղադրուի Խոշոր Չափով Խարդախութեան Եւ Փողերու Լուսցման Մէջ



Նաւասարդ արքեպիսկոպոս Կճոյեան՝ 100 հազար տոլարէն աւելի արժող իր Պենթի ինքնաշարժի կողքին

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ) բարձրաստիճան հոգեւորականին մեղադրանք առաջադրած է Ապրիլ 13-ին: Նաւասարդ արքեպիսկոպոս Կճոյեանը կը մեղադրուի առանձնապէս խոշոր չափով խարդախութեան եւ փողերու լուսցման մէջ: Մեղադրանքը կապուած է տարիներ առաջ մեծ աղմուկ բարձրացուցած Կիպրոսի օֆշորային գալթիակցութեան հետ, որու կիզակէտին յայտնուած էին նախկին վարչապետ Տիգրան Սարգսեանն ու Նաւասարդ արքեպիսկոպոս Կճոյեանը: Շուրջ երեք տարի առաջ տուեալ գործով 16 տարուան ազատազրկման դատապարտուած է Աշոտ Սուքիասեանը, որ քաղաքականական յարաբերութիւններու մէջ եղած է արքեպիսկոպոսի հետ: Սուքիասեանն այս տարի պատժի մեղմացման հետեւանքով ազատ արձակուած է:

Նաւասարդ արքեպիսկոպոս Կճոյեանի փաստաբան Յովիկ Արսէնեանը «Ազատութեան» յայտնած է, որ իր վստահորդը չընդունիր մեղադրանքը:

Այս կապակցութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատուական համակարգը հաղորդագրութիւն տարածած է՝ կոչ ընելով «հանրութեան, այդ թւում՝ պաշտօնատար անձանց եւ լրատուամիջոցներին, յարգել անձի՝ օրէնսդրութեամբ երաշխաւորուած անմեղութեան կանխավարկածը եւ ձեռնպահ մնալ անհարկի, շտապողական մեկնաբանութիւններէն ու անհիմն գնահատականներէն»:

Միաժամանակ, Մայր Աթոռի տեղեկատուական համակարգն արձանագրած է, որ «քրէական գործով արծարծուող թեման գանգուածային լրատուամիջոցներով շրջանառուել է տակաւին 2013 թուականից, իսկ չիշեալ քրէական գործը յարուցուել է տարիներ առաջ»: «Տարակուսելի է, որ չիշեալ քրէական գործով Տ. Նաւասարդ արք. Կճոյեանին որպէս մեղադրեալ ներգրաւելու մասին հրապարակայնացումը ուղղակիօրէն յաջորդում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից «Քորոնա» ժահրի համաւարակի պայմաններում խոցելի խմբում գտնուող կալանաւորների, այդ թւում եւ ՀՀ երկրորդ նախագահ Ռուպերթ Քոչարեանի խափանման միջոցի փոփոխման վերաբերեալ դիրքորոշման հան-

րայնացմանը»: - ըստ է հինգ-շաբթի երեկոյեան հրապարակուած հաղորդագրութեան մէջ: - «Թէեւ սոյն պարագան առաջացնում է որոշակի մտահոգութիւններ, այսուհանդերձ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ցանկանում է յուսալ եւ հետամուտ է լինելու, որ քրէական գործով իրականացուի անաչառ, լրիւ ու բազմակողմանի քննութիւն»:

Մայր Աթոռի տեղեկատուական համակարգը նշած է, որ «չիշեալ գործով Տ. Նաւասարդ արք. Կճոյեանի իրաւական պաշտպանութիւնն իրականացում է փաստաբանների կողմից, որոնք գործի առնչութեամբ, ըստ անհրաժեշտութեան, կը ներկայացնեն համապատասխան լուսաբանութիւններ ու պարզաբանումներ»:

Յիշեցնենք նաեւ, որ Ռուպերթ Քոչարեանի խափանման միջոցի փոփոխման կարեւորութեան վերաբերեալ իր դիրքորոշումը Գարեգին երկրորդ կաթողիկոսը հրապարակած էր շաբաթակիցը: «Ազատութեան» խնդրանքով արձագանգելով այդ դիրքորոշման՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի մամուլի խօսնակը յայտարարած էր, մասնաւորապէս, որ «ՀՀ կառավարութիւնը որեւէ մեկնաբանութիւն չունի Վեհափառի ցանկութիւնների ու յոյսերի վերաբերեալ»: «Միեւնոյն ժամանակ ակնկալում ենք, որ Մայր Աթոռը կը վերագնահատի Մայրապետեանի երաշխաւորութեան պատմութիւնը եւ դրա հետեւանքով առաջացած վիճակը», - ըսած էր Մանէ Գէորգեանը:

«Մայր Աթոռի տեղեկատուական համակարգի ղեկավար Տէր Վահրամ քահանայ Մելիքեանը մինչ այս եղել է Ռուպերթ Քոչարեանի հետ նոյն՝ Մարտի 1-ի գործով անցնող, տարբեր յանցանքների, այդ թւում՝ առանձնապէս խոշոր չափերով կաշառք տալուն եւ փողերի լուսցմանն օժանդակելու մէջ մեղադրուող Սամուէլ Մայրապետեանի անձնական երաշխաւորը: Մայրապետեանը 2019-ի Յունուարից բուժման պատրուակով մեկնել է երկրից եւ չնայած քննչական մարմնի պահանջին եւ ի հեճուկս Տէր Վահրամ քահանայ Մելիքեանի երաշխաւորութեանը, չի վերադարձել Հայաստան», - յիշեցուցած էր վարչապետի խօսնակը:

# Երոպական Խորհրդարանը Կ'առաջարկէ Երոպական Միութեան Եւ Արեւելեան Գործընկերութեան Երկիրներու Միջեւ Ընդհանուր Տնտեսական Տարածք Ստեղծել

Երոպական խորհրդարանը կ'առաջարկէ Երոպական միութեան եւ վեց յետխորհրդային երկիրներուն, անոնց կարգին՝ Հայաստանին, միջեւ ստեղծել «ընդհանուր տնտեսական տարածք»: Փաստաթուղթին մէջ, որու բովանդակութեան ծանօթացած է «Ազատ Երոպա/Ազատութիւն» ռատիոկայանը, երոպացի օրէնսդիրները միեւնոյն ժամանակ կը դատապարտեն Ռուսաստանի գործողութիւնները Արեւելեան գործընկերութեան անդամ երկիրներուն մէջ:

Փաստաթուղթը յառաջիկային քննարկումի կը դրուի Երոպական խորհրդարանի արտաքին հարցերու յանձնաժողովին եւ ամենայն հաւանականութեամբ խորհրդարանի հաւանութեան կ'արժանանայ Մայիսին, որմէ յետոյ Յունիս 18-ին նախատեսուած է Երոպական միութեան անդամ երկիրներու եւ Արեւելեան գործընկերութեան անդամ պետութիւններու՝ Հայաստանի, Ատրպէյճանի, Վրաստանի, Ուքրանիոյ, Պելառուսիոյ եւ Մոլտովիոյ ղեկավարներու հանդիպումը Պրիւքսել: Այդ գագաթնաժողովի ընթացքին Երոպական Միութիւնը կը պատրաստուի նոր քաղաքականութիւն հաստատել հարեւաններու հետ յարաբերութիւններու վերաբերեալ: Երոպական միութեան շարք մը դիւանագետներ, սակայն, «Ազատութեան» յայտնած են, որ «Քորոնա» ժահրի համաճարակի պատճառով հանդիպումը, ըստ ամենայնի, կը յետաձգուի մինչեւ տարուայ երկրորդ կէսը:

Անուղղակիօրէն նկատի ունենալով Ռուսաստանը, որ կոշտ կը

հակադէ Երոպական միութեան եւ ՆԱԹՕ-ին մերձեցալու, յետխորհրդային երկիրներու ջանքերուն, Երոպական խորհրդարանը կը վերահաստատէ «Արեւելքի գործընկեր երկիրներու ինքնիշխան իրաւունքը, ազատ ընտրելու Երոպական միութեան համակրումի կամ Երոպական Միութեան հետ համագործակցութեան անհատական մակարդակը», - ըսուած է նաեւ փաստաթուղթին մէջ:

Երոպական խորհրդարանը նաեւ բաց գրութեամբ «խստօրէն կը դատապարտէ Արեւելեան գործընկերութեան տարածաշրջանէն ներս հիմնարար սկզբունքներու եւ միջազգային իրաւունքի նորմերու խախտումը, Ռուսաստանի Դաշնութեան կողմէ ուժի ապօրինի կիրառումը, ներխուժումը, ապակայունացումը, բռնակցումը, սահմաններու խախտումը եւ գրաւումը Արեւելեան գործընկերութեան անդամ շարք մը երկիրներու տարածքներուն մէջ»:

2009 թուականին, ստեղծելով Արեւելեան գործընկերութեան ծրագիրը, Երոպական Միութիւնը նախկին խորհրդային միութեան անդամ վեց պետութիւններուն ի սկզբանէ հնարաւորութիւն ընձեռած է մերձեցալու Երոպական դաշինքին հետ, սակայն, առանց անդամակցութեան հեռանկարի: Տասը տարի ետք վեց երկիրներէն՝ Մոլտովան, Ուքրանիան եւ Վրաստանը ստորագրած են Միացման պայմանագիրները: Հայաստանը բաւարարուած է Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրով:

# Ապօրինի Գոյքի Բռնագանձման Օրինագիծը Ընդունուեցաւ Ամբողջութեամբ



Խորհրդարանը Ապրիլ 16-ին, ձայներու 99 կողմ, 1 դէմ, 15 ձեռնպահ յարաբերակցութեամբ երկրորդ ընթերցումով, ամբողջութեամբ ընդունեց ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման օրինագիծը:

Նախագիծը առաջին ընթերցումով ընդունուած էր մարտի սկիզբը: «Լուսաւոր Հայաստան» խմբակցութիւնը կողմ քուէարկած էր այն պայմանով, որ մինչեւ երկրորդ ընթերցում հաշուի առնեն իրենց շուրջ երեք տասնեակ առաջարկները, «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութիւնը ձեռնպահ քուէարկած էր, դարձեալ առաջարկութիւններ ներկայացնելով:

Արդարագատութեան նախարար Ռուստամ Պատասեան, մէկ օր առաջ ներկայացուցած էր լրամ-

շակուած նախագիծը, շեշտելով, որ ապօրինի ծագում ունեցող գոյքի նուազագոյն շեմը 25 միլիոնէն դարձած է 50 միլիոն դրամ, ինչ որ ընդդիմադիրներու առաջարկն էր:

Դատախազութիւնը չի կրնար կամայականօրէն հետաքրքրուիլ քաղաքացիին եկամուտներու եւ ունեցուածքի տարբերութեամբ, այդ կրնայ կատարուիլ քանի մը պարագաներու, եթէ անձը կ'անցնի հիմնականօրէն քրուեփցիոն գործերով, միայն նախկին եւ ներկայիս պաշտօնեաներու պարագային քննութեան հիմք կրնայ դառնալ գործադիր հետախուզական տուեալը: Ըստ օրէնքի՝ իրաւասու մարմինը կ'որոշէ ուսումնասիրուող ժամանակահատուածը, որ կրնայ ներառել բացառապէս 1991 թուականի սեպտեմբեր 21-ի յաջորդող ժամանակահատուածը:

### Հարցազրույց Ա.Դ.Յ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի Ատենապետ Ընկեր Սեպուհ Գալփաքեանի հետ

## Վստահ եղեք, որ ճգնաժամն էն դուրս պիտի գանք աւելի ուժեղ, աւելի խոհեմ եւ աւելի կարող

Հ.- Լիբանանահայուց վրայ ի՞նչ ժխտական ազդեցութիւն ձգեց Գորոնա ժառանգը:

Պ.- Բոլորիս գաղտնիք մը չէ, որ 2020 թուականը անբաղձալի անակնկալներ մատուցած է համայն մարդկութեան, ներուաւել՝ Լիբանանին: Բնականաբար, մենք եւս գերծ չենք մնացած Գորոնա ժառանգի արհաւիրքէն: Ազդուած են մեր աշխատանքները, մեր ընկերատնտեսական կեանքը, մեր օրերը ազատօրէն եւ ուրախութեամբ վայելելու հնարաւորութիւնը: Աւելին՝ վտանգուած է մեր եւ մեր հարազատներուն, ծանօթ-անծանօթներուն կեանքը: Գորոնա ժառանգի մաճարակը չէ խնայած ոեւէ մէկը, առանց մարդ արարածին յատուկ խտրականութեան, ցեղային, սեռային, թէ տարիքային սահմանափակումներու:

Այսպիսի աղէտի մասին մենք լսած ենք միայն պատմութեան գիրքերուն մէջ, կամ դիտած ենք շարժապատկերտեսքէն: Գերարդիւական արհեստագիտութեամբ յագեցած ընկերութիւններուն եւ պետութիւններուն համար դժուար էր պատկերացնել, թէ ինչպէս կարելի է անկարող եւ անօգնական մնալ այսպիսի համաշխարհային ճգնաժամի դիմաց: Եւ եթէ այլ հիւանդութիւններու պարագային լուծումը առկայ է ու յստակ, այս

պարագային բժշկութիւնն ու գիտութիւնը տակաւին չեն յաջողած գտնել դարմանն ու կանխարգիլումի պատուաստը: Գուցէ այդ կարօտի որոշ ժամանակի:

Հ.- Մինչ այդ, ի՞նչպէս պաշտպանուի:

Պ.- Առաջին հերթին պէտք է վերջապէս գիտակցիլ, որ այս ժահրը անուղղակի կամ ուղղակի ձեւով կրնայ հարուածել բոլորը: Պէտք չէ ենթադրել, որ երիտասարդները եւ առողջ մարդիկ պաշտպանուած են վտանգէն, կամ թէ այս ժահրը այդքան ալ մահացու չէ, հետեւաբար կարելի է մեր սովորական կեանքը շարունակել, մինչ ուրիշներ կը տառապին: Առաջ մեր շրջանակներուն, մեր երկրին եւ ընդհանրապէս աշխարհի մէջ վարակի յաւելեալ տարածումը կանխելու եւ յաւելեալ կորուստներէ խուսափելու միակ միջոցը ինքնամեկուսացումն է եւ ընկերային ոչանհրաժեշտ շփումներէ խուսափումը, ինչպէս նաեւ խուճապի չմատուցելն ու անհիմն լուրերու չհաւատարմը:

Հ.- Որքա՞ն ժամանակ պէտք արգելափակուիլ տան մեք:

Պ.- Պարզ է, որ երկար ժամանակ տունը մնալը կ'անհանգստացնէ բոլորը եւ մենք կ'ուզենք շատ շուտով վերադառնալ մեր սովորական բնականոն կեանքին: Այսու-

հանդերձ, առաջ մ'այլընտրանք չունինք քան տան մէջ մնալը: Եթէ կ'ուզենք կարելի եղածին չափ շուտ վերադառնալ գործի, տեսնել հարազատներն ու ընկերները, ապա պէտք է գոհորդութիւն, այս փուլին անհրաժեշտ է մնալ կարգապահ, խիստ լրջութեամբ գործադրել ինքնամեկուսացումի եւ ընդհանուր գորաշարժի ցուցմունքները, որպէսզի շրջափակենք Գորոնա ժառանգի տարածումի հնարաւորութիւնները եւ ժամանակի ընթացքին տապալենք անոր վտանգը, այն ինչ այսօրուայ դրութեամբ բաւական դրական ցուցանիշ արձանագրուած է:

Հ.- Գորոնայէն առաջ եւ Գորոնայէն յետոյ ի՞նչ:

Պ.- Գորոնայէն յետոյ, վստահ եմ, որ իւրաքանչիւր անձ ժամանակ ունեցած պիտի ըլլայ իր մեկուսացման օրերուն վերաբերուող իր կեանքի անցած ուղին: Սովորաբար բանտարկեալները այդպէս կ'ընեն: Հասանաբար կարեւոր եզրակացութիւններու հասած կրնայ ըլլալ, ինչպէս օրինակ, որ կեանքի մէջ ամէն բան նիւթականով չէ եւ հարստութիւնը, պաշտօնը կամ ծանօթութիւնները միշտ չէ որ կրնան բոլոր հարցերը լուծել: Ոխակալութիւնը, նախանձութիւնը եւ դրամապաշտութիւնը կը քանդէ մարդարարածին կեանքը եւ զինք կը դժբախտացնէ: Յուսանք, որ մեր ժողովուրդը Գորոնայէն ետք աւելի իրապաշտ եւ հոգատար կերպով կը մօտենայ կեանքին եւ մեր ազգային արժէքներուն:

Հ.- Եզրափակելու համար, ի՞նչ խօսք ունիք ըսելու:

Պ.- Մենք կը բոլորենք աննախադէպ փուլ մը եւ միայն միասնականութեամբ, իրար օգնելով, մեր դժուարութիւնները բաժնետոկով կարողութիւն ունինք որպէս մէկ հաւաքականութիւն ձերբազատելու այս արհաւիրքէն: Երբեք չխորհինք, թէ կրնանք սովորական



կեանքի վերադառնալ, եթէ ուրիշներ տակաւին արգելափակուած են իրենց տուններուն մէջ: Քիչ առաջ մատնանշեցի Գորոնայի պատճառած ժխտական երեւոյթները, բայց կայ նաեւ դրական բաժինը, որ մեր կազմակերպութիւնները եւ համայնքները ինչպէս գործի անցան դիմակայելու համար այս մարտահրաւէրը: Մեր երիտասարդութիւնը, անտեսելով վարակի վտանգը հասաւ եւ կը հասնի մեր կարիքաւորներուն: Մենք մեր ժողովուրդը երբեք չենք լքեր. հակառակ մեր սահմանափակ նիւթական կարողութիւններուն, երբեմն նման մարտահրաւէրներու առաջ նոյնիսկ կարողութեան մեր սահմանները կ'անցնինք՝ ժողովուրդին հետ մնալու համար: Այժմ պահն է վերականգնելու մեր հաւաքականութիւնն ու միասնականութիւնը: Վստահ եղէք, որ ճգնաժամէն դուրս պիտի գանք աւելի ուժեղ, աւելի խոհեմ եւ աւելի կարող: Մեր գործերը մեր աշխատասիրութեամբ պիտի վերականգնենք, սակայն մեր սիրելիներուն կեանքը չենք կրնար վերականգնել: Հետեւաբար, այժմ պահն է կարգապահութեան եւ միասնականութեան:

### Արտահոսքի հետ կապուած Միջադէպ

Շարունակուած էջ 1-էն

«Յաջողութիւնը, որը հիասթափուելու շատ որոշակի պատճառ ունի, նախկին իշխանութեան ենթակառուցուածքի մէջ ներգրաւուած մարդիկ են», - նշեց ան, մանրամասնելով, որ անոնց կարգին կրնայ նշել որոշ փորձագէտներ, ֆէյսպուքեան աշխուժ օգտատէրեր, որոնք նախորդ իշխանութիւններու PR-ով (Հանրային կապերով) կը զբաղուէին:

Ըստ վարչապետին՝ «հիասթափուած են» արեւմտամէտները, քաղաքական ուժերը, իշխանութեան մէջ եղած եւ իշխանութեան մօտ կանգնած երիտասարդները, ռուսամէտները, օլիգարխիան սակաւապետութիւնը կամ նախկին սակաւապետները, յուսալի ֆինանսաւորումի աղբիւրէն զրկուած լրատուամիջոցները, հոգեւորականութիւնը, սփիւռքի որոշ կառույցներ, նիւթական ակնկալիքով յեղափոխութեան մասնակցած մարդիկ:

«Արեւմտամէտները պէտք է հիասթափուէին, որովհետեւ Հայաստանում արեւմտամէտ ուժեր չեն եկել իշխանութեան: Ռուսամէտները պէտք է հիասթափուէին, որովհետեւ իշխանութեան ներկայացուցիչներն իրենց իշխանութիւնը նրանց հետ չէին կիսելու: Պէտք է հիասթափութիւն ապրեր սակաւապետութիւնը կամ նախկին սակաւապետները, որը զրկուել է շատ արտօնութիւններից: Լրատուամիջոցները, որոնք զրկուել են յուսալի ֆինանսաւորման աղբիւրներից», - ըսաւ վարչապետը:

Ան շեշտեց, որ Զանգուածային Լրատուութեան Միջոցներու (ԶԼՄ) մեծ խուճմբ մը կայ, որ կը շարունակէ ֆինանսաւորուիլ նախկին իշխանութիւններուն կողմէ, անոնց հիասթափութեան պատճառն

ալ այն է, որ կը հասկնան, որ այդ վիճակը երկար պիտի չշարունակուի. նախկին իշխանութիւններու գոմարները պիտի աւարտին:

«Հայաստանում ակնյայտ է դառնում, որ հոգեւոր կեանքն արժէքների եւ գաղափարների սերմանման մեծ բացեր ու հարցեր ունի, որն էլ առաջացնում է հոգեւորականութեան շրջանում լրջագոյն հիասթափութիւն», - նկատել տուաւ վարչապետը:

Ապրիլ 17-ին, վարչապետին ուղերձի ուղիղ եթերը ապահոված էր Հանրային հեռուստաընկերութիւնը, որ հաստատեց, որ արտահոսք չէ եղած: Հանրայինը ապահոված էր բաց կապուղի, որմէ օգտուած են Արմենիա, Շանթ, Միւր, Հ2, ԱՐ, Կեդրոն, Երկիր Մետիա, 5-րդ ալիք հեռուստաընկերութիւնները:

Հանրայինի յայտարարութեան անդրադարձած էր վարչապետի մամուլի քարտուղար Մանէ Գէորգեան: Ֆէյսպուքէան էջին վրայ գրած էր, որ վարչապետի աշխատակազմի յորդորով վարչապետի ուղերձը բաց կապուղիով միւս հեռուստաընկերութիւններու տրամադրելը, ամենեւին ալ չի նշանակել, որ հեռուստաընկերութիւնը պէտք է բաց կապուղի ապահովեր, նախապատրաստական աշխատանքներէն սկսեալ. «Մասնագիտական մօտեցումը ենթադրում է, որ միւս հեռուստաընկերութիւններին բաց կապուղի պէտք է հաղորդուէր եթերից բացառապէս վայրկեաններ (ռոպէներ), այլ ոչ 5, 10, 15 կամ 20 րոպէ (վայրկեաններ) առաջ: Այնինչ պարզուել է, որ Հանրային հեռուստաընկերութիւնը, առանց վարչապետի աշխատակազմին տեղեակ պահելու, առնուաբար 15 րոպէ (վայրկեան) առաջ բաց կապուղի է ապահովել միւս հեռուստաընկերութիւնների համար»:

**ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION**  
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Announces the opening of the  
**2020 AEBU**  
**Scholarship Program**  
Empowering Our Youth for a Brighter Future

To apply, visit our website  
**WWW.AEBU.ORG**

**APPLY NOW**  
Through June 30, 2020

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

626•344•7321  
AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE  
1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104

# Ապրիլ 24-ը եւ Պսակածեւ ժաիրը

## ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Պսակածեւ ժահրը (Corona Virus), գործած աւերներու կողքին, ունի նաեւ դրական կողմ մը՝ արծաթեայ աստառ (silver lining) մը, որ մեզ կը մղէ խորհրդածել առօրեայ եւ ընթացիկ մտածելակերպէն դուրս գալու անհրաժեշտութեան մասին:

Մեզմէ շատերուն համար սովորական երեւոյթ դարձած էր Ապրիլ 24-ի առթիւ ցոյցի կամ քայլարշաւի մասնակցիլ եւ հսկումի կամ հաւաքի մը ներկայ գտնուիլ: Երբ այս տարի պսակածեւ ժահրը մեզի կ'արգիլէ սովորական դարձած այդ արարքները ընելէ, մեզի ինքնաբերաբար կը մղէ մեր Եղեռնի զոհերու յիշատակը յարգելու նոր միջոցներու որոնման: Որ իր կարգին դուրս կը բանայ ոչ միայն նոր դիտանկիւններէ զննելու հարցը, այլ ընթացիկէն անդին, խորացնելու եւ մտնելու տարագիրներու հոգեվիճակին մէջ: Բայց պայմանաւ, որ հոն չընկղմինք, այլ սարսափի թողած ազդեցութեան տակ, մեր մէջ ամրակաշուի անգամ մըն ալ նոյն ճակատագրին չենթարկուելու վճռականութիւնը:

Երբ կը յաջողինք այդ ընել, մեր մտածելակերպը օժտած կ'ըլլանք զեղեցիկին, բարիին, վսեմին ու լաւին ձգտելու յաւելեալ ուժականութեամբ եւ վեհութեամբ: Որ բնականաբար իր անդրադարձը պիտի ունենայ մեր անհատական թէ՛ համայնքային կեանքի դրսեւորման մէջ:

Պիտի սկսինք մեզ իրարմէ բաժնող երեւոյթներու վրայ անդրադառնալէ աւելի, կեդրոնանալ մեզ իրար միացնող երեւոյթներու վրայ: Որ ինքնաբերաբար պիտի

գորացնէ մեր հաւաքականութիւնը:

Պիտի սկսինք մեր ցաւը մեզի պահելէ անդին, այլ հաւաքականութիւններու ներդրումը շահիլ մեր ցաւի ամօքման գործընթացին, պայմանաւ որ մենք ալ մեր կարգին ցաւակից դառնանք իրենց ցաւին: Որ ինքնաբերաբար պիտի գորացնէ աշխարհի ժողովուրդներու միջեւ սերտակցութիւնը, որ իր կարգին պիտի նպաստէ բոլորիս սպառնացող վտանգներու վնասագրեման:

Երբ մտովի կը փոխադրուինք Եղեռնի տարիներու ժամանակաշրջանը եւ կը փորձենք դոյզն չափով իսկ պատկերացնել այդ արհաւիրքի մէջէն անցնող մեր մէն մի ազգակիցի մտածումները, անկարելի կ'ըլլայ չսահմակիլ անոնց ազդեցութեան տակ: Նախ, ամէն գնով կեանքին կառչելու անհաւասար պայքար: Ապա, ողջ մնալէ ետք, կեանքը ապրելու, արժեւորելու պայքար:

Կրնա՞ք պատկերացնել կենաց մահու պայքարի մէջէն անցնողի մը երախտագիտական զգացումները հանդէպ անոր, որուն ընծայած փրկութեան լաստին շնորհիւ ան կենդանի կը մնայ:

Ի՞նչ կրնար ըլլալ մեր ազգի ճակատագիրը, եթէ Ամերիկայի Մերձաւոր Արեւելքի Օգնութեան (Near East Relief) կոմիտէն չփրկէր տասնեակ հազարաւոր որբերու կեանքը:

Ի՞նչ կրնար ըլլալ մեր ազգի ճակատագիրը, եթէ արաբական աշխարհը փրկութեան օրրան չհանդիսանար Եղեռնէն վերապրած մեր տարագիր ժողովուրդին:

Մեր այս խորհրդածութիւններու գրութեան ժամանակ, պսակածեւ ժահրը աշխարհի տարածքին խլած է աւելի քան 150,000

կեանք եւ «տնային կալանք»ի ենթարկած աշխարհի բնակչութեան կարեւոր մէկ մասը: Չնչուած են հրապարակային մարդահաւաք միջոցառումներ, որոնց շարքին նաեւ Եղեռնի ոգեկոչման հաւաքներ: Ի տես այս իրավիճակին, Եղեռնի արհաւիրքէն վերապրած աշխարհացրիւ հայ հաւաքականութիւնները ի՞նչպէս կրնան իրենց ցաւի նշման կողքին ցաւակից դառնալ նաեւ իրենց շրջանի հաւաքականութիւններու ցաւերուն: Մենք Եղեռնէն արիւնաքամ չեղանք, շնորհիւ նաեւ բոլոր անոնց, որոնք օգնութեան հասան մեզի: Ժամանակն է, որ ամէն Ապրիլ 24-ին, աշխարհաճրիւ հայութիւնը նորովի մտնեցնենք մեր լալնաճաւաղ ու ազդեցիկ քարոզչութեամբ իր երախտագիտութիւնը յայտնէ իր շրջապատին:

Այսպիսի նորովի մտնեցման մը զեղեցիկ օրինակը տրուեցաւ հինգ տարիներ առաջ մեկնարկուած Մարդասիրութեան Չարթօնքի համար «Ակորո» մրցանակով: Միջազգային տարողութիւն ունեցող այս ծրագիրը 2016-էն ի վեր կը պարգևատրէ անհատներ, որոնք մարդասիրական հիանալի աշխատանք կը տանին աշխարհի տարածքին: Այս մրցանակով կը պատուուի նաեւ հայ ժողովուրդի անունը, որպէս երախտագիտ ժողովուրդ:

Անցեալ ամիս յայտարարուեցաւ, որ Եղեռնի 105-ամեակին առթիւ, 24 Ապրիլ 2020-ին, տեղւոյս Հայ Կրթական Բարեսիրական Միութիւնը (ՀԿԲՄ), համագործակցութեամբ Ամերիկեան Կարմիր խաչին, կազմակերպած է արեան նուիրահաւաք մը Փասսատինայի իր կեդրոնին մէջ: Յոյսով ենք, որ ՀԿԲՄ-ի այս նախաձեռնու-



թիւնը կը դառնայ ամէնամեայ աւանդութիւն մը ու կ'որդեգրուի աշխարհասփիւռ հայ հաւաքականութիւններու կողմէ:

Օրեր առաջ յայտարարուեցաւ նաեւ, որ Հայոց Յեղասպանութեան Ոգեկոչման Լոս Անճելոսի Միացեալ Մարմինը, համագործակցութեամբ Ամերիկեան Feeding America հաստատութեան, կազմակերպած է դրամահաւաք, 1,500,000 ճաշ հայթայթելու, ի յիշատակ մեր Եղեռնի նահատակներուն:

Մենք կը հաւատանք, որ այս եւ նմանօրինակ բարեսիրական ծրագիրներով, որոնք կը ներգրաւեն նաեւ ոչ-հայ անձերու եւ կազմակերպութիւններու համագործակցութիւնը, մենք աւելի արդիւնաւէտ ձեռով նշած կ'ըլլանք Եղեռնի զոհերու յիշատակումը, միաժամանակ նպաստելով հայութեան եւ Հայաստանի անուան մեծարման:

# Հայոց Յեղասպանութեան Ոգեկոչման Լոս Անճելոսի Յանձնախումբերու Միացեալ Յայտարարութիւնը

Շարունակուած էջ 1-էն

2020-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, ամբողջ օրուայ յայտագիրով ներկայացնելու տեղական հայկական պատկերասփիւռի կայաններէն եւ քանի մը ժամով ուղիղ սփռումը համացանցի միջոցով:

Ամբողջ օրուայ ոգեկոչման ընթացքին կը ներկայացուին շարք մը նշանաւոր պետական ??պաշտօնեաներ, համայնքներու ղեկավարներ եւ հոգեւորականներ, ինչպէս նաեւ տեղեկատուական քննարկումներ՝ կապուած Հայոց Յեղասպանութեան ճանաչման, արդար հատուցումներու, եղեռնի զոհերու վերահաստատման եւ յանցագործութեան վերականգնման մասին: Բացի այդ, ակնդիրները հնարաւորութիւն կ'ունենան տեսնելու ցեղասպանութեան մասին վաւերագրական ֆիլմեր եւ լսելու մեր համայնքի յայտնի անհատականութիւններէն եւ մշակութային ներկայացումներ՝ 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան զոհերու յիշատակը յարգելու համար:

Հայոց Յեղասպանութիւնը անպատմելի սարսափներ առաջացուց Օսմանեան կայսրութեան լուծին տակ ապրող հայ բնակչութեանը, ներառեալ զանգուածային սով: Այն ժամանակ, Միացեալ Նահանգներու պատմութեան մէջ, Ամերիկացիները ամենամեծ օգնութեան ջանքերը կատարեցին, հիմնելով Մեր-

ձաւոր Արեւելքի օգնութեան յանձնաժողովը, որպէսզի օգնութիւն ցուցաբերեն ցեղասպանութեան ճողոպրած հայերուն: Հայերը երբէք չեն մոռցած Ամերիկացի ժողովուրդի բարեսիրութիւնն ու մեծահոգութիւնը: 105 տարիներ ետք, «Քորոնա» ժահրի բերած աննախադէպ մակարդակի գործազրկութեան պատճառով, այժմ Ամերիկացիները կանգնած են ճգնաժամային անապահովութեան դիմած: Ճգնաժամային այս դրութեանէն դուրս գալու անհրաժեշտութեան լուծման համար, Հայոց Յեղասպանութեան Ոգեկոչման Լոս Անճելոսի Միացեալ Մարմինը, Միացեալ Հայ Երիտասարդները եւ Հայոց ցեղասպանութեան յանձնախումբ միաւորը, Feeding America կազմակերպութեան հետ համագործակցելով, սկսած է դրամահաւաքի արշաւի, Միացեալ Նահանգներու տարածքին մէկ ու կէս միլիոն կարոտեալի ճաշ տրամադրելու համար, ի յիշատակ մեր ընկած նահատակներուն եւ առ ի երախտագիտութիւն մեզի օգնութեան հասած Ամերիկացի ժողովուրդին:

Այս դրամահաւաք արշաւի միջոցով, ամբողջ հայ համայնքը պիտի կարողանայ իր շնորհակալութիւնը յայտնել Ամերիկային՝ մեր ամենայն դժուար պահին, իր կատարած մարդասիրութեան համար, եւ որպէս Ամերիկահայեր, ժամանակն է փոխադարձելու նաեւ փոխադարձելու մեր ուժերը ի սպաս դնելով՝ օգնելու համար այս դժուար պահերուն, անոնց որոնց սնունդի պակաս ունին, համայնքներուն եւ առանց պատկանելիութեան համար խտրականութիւնը (ՀԿԲՄ), համագործակցութեամբ Ամերիկեան Կարմիր խաչին, կազմակերպած է արեան նուիրահաւաք մը Փասսատինայի իր կեդրոնին մէջ: Յոյսով ենք, որ ՀԿԲՄ-ի այս նախաձեռնու-

ութեան ի սպաս դնելով՝ օգնելու համար այս դժուար պահերուն, անոնց որոնց սնունդի պակաս ունին, համայնքներուն եւ առանց պատկանելիութեան համար խտրականութիւնը դնելու:

Ոգեկոչման եւ 1,5 միլիոն կերակրման ծրագրի մասին, աւելի մանրամասն տեղեկութիւններ շուտով կը հրապարակուին:

Հակառակ հսկայական մարտահրաւէրներուն, որոնք ամբողջ մարդկութեան ազդած է, Հայոց Յեղասպանութեան Ոգեկոչման Լոս Անճելոսի Միացեալ Մարմինը, Միացեալ Հայ Երիտասարդները եւ Հայոց ցեղասպանութեան յանձնախումբ միաւորը հիմք ունենալով ծայրահեղօրէն անբարենպաստութեան առջեւ կանգնած մեր նախահայրերու ասնելի օրինակը, որոնք

պատշաճօրէն վերածնունդ առած են աւելի ուժեղ քան երբեք, հավատարիմ կը մնայ Հայ Դատին եւ միասնաբար կ'աշխատի լուծում գտնալու հայոց ցեղասպանութեան արդարացի բանաձեւին՝ Թուրքիոյ կառավարութեան պահանջներով ցեղասպանութեան ճանաչումը, ինչպէս նաեւ արդար փոխհատուցում:

Մեր աշխատանքը կը շարունակուի: Կանգնած ենք միասնական եւ մեր ձայնը լսելի պիտի դարձնենք 20րդ դարու առաջին ցեղասպանութեան զոյղ դարձաց մեր 1,5 միլիոն նահատակներու յիշատակին:

Յուսով ենք, որ այս համաշխարհային ժահրը շուտով կը հասնի իր աւարտին, եւ մեր բոլոր համայնքները կը վեր կը բարձրանան աւելի զօրաւոր, քան երբեք:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈՊԻ ՎԱՍԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՆՐՈՒ ՎԱՍԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**(626) 797-7680**

# ԱՄՆ-ը եւ Հայոց Ցեղասպանութեան Ծանաչումը



ՃՐՏԳ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ

Ապրիլ 24, 1915-ին, Պոլսոյ մէջ ձերբակալուեցան հարիւրաւոր հայ մտաւորականներ, քաղաքական գործիչներ եւ ուղարկուեցան դէպի սեւ ճակատագիր. այդպէսով սկիզբ առաւ (1915-1923) թուականներու Հայոց Ցեղասպանութիւնը, որ թէեւ կարմիր Սուլթանի Համիտի ժամանակաշրջանէն ծայր առած էր, սակայն էնվէր, Թալեմի, ձեռնարկուեցաւ կատարելագործեց Արեւմտեան Հայաստանի հայ ժողովուրդի տեղահանման եւ բնաջնջման ծրագիրը:

Ահաւասիկ, այս տարի Ցեղասպանութեան 105-րդ ամեակն է, եւ այն սերունդը որ ապրեցաւ այդ դժբախտութիւնը եւ աղէտը, կը հանգչի ի Տէր բացի մի քանի մամիկ եւ պապիկներէ, եւ պահանջատիրութեան, հատուցումի եւ գրաւուած հողերու ազատագրման պարտականութեան դրօշը նոր սերունդները կը կրեն:

Անտարակոյս, մենք բոլոր պետութիւններու, ի մասնաւորի մեծ պետութիւններու առնուազն քաղաքական աջակցութեան կարիքը ունինք եւ ինչու չէ՞ ռազմական աջակցութեան կարիքը: Աջակցողները թիւը օրէ օր կաւելնայ, այդ մէկը լաւ է սակայն տակաւին շատ աշխատանք կայ տանելու. ԱՄՆ-ը ամենաուշն էր, եւ դեռ ուրիշներ ալ կան:

## ԻՆՉՈ՞Ւ ԱՄՆ-Ը ԱՅՍՔԱՆ ՈՒՇ ՄՆԱՅ

ուին այս գարշելի եւ ահազող պատուհասին, հազարաւոր շտապ օգնութեան ծառայողներ, բժիշկներ, բուժքույրեր, պետական ծառայողներ, բարի սամարացիներ, կամաւորներ եւ ոչ պետական կազմակերպութիւններ օրն ի բուն կը խնամեն, կը բուժեն, յոյս կը ներշնչեն եւ շատ մը պարագաներու կեանք կը պարգեւեն խճողուած մահիճներու վրայ գտնուող հիւանդներու՝ ըլլան անոնք հիւանդանոցներու կամ շտապ կառուցուած բժշկական սարքաւորումներու մէջ:

Հուռա՛յ, բոլոր անոնց՝ որոնք կոչումը ունին, նուիրաբերումը եւ կամ պարտաւորութիւնը իրենց օգնութեան ձեռքը երկարելու:

Հարիւր հինգ տարիներ առաջ Օսմանեան Թուրքիա կոչուած մէկ այլ ժանտախտ՝ կանխամտածուած պետական ծրարով, ֆիզիքական ոչնչացման ենթարկեց կայսրութեան բնակչութեան մէկ հատուածը: Անոնք, իրենց պայպենական հողերուն վրայ խաղաղութեամբ կ'ապրէին հազարաւոր տարիներէ ի վեր՝ ետին մահ եւ ոչնչացում ձգող Թրքական սմբակներու դէպի Մերձաւոր Արեւելք խուժումէն շատ առաջ:


Ամէն բանի ժամանակը կայ:

Այսօր, թագաժահրի այս ողբերգութեան ընդմէջէն, պարտինք կասեցնել ժամացոյցներու ընթացքը, յարգելու յիշատակը եւ յարգանքի տուրք մատուցանելու մեր մէկու կէս միլիոն նահատակներուն, որոնք անմարդկային ամենադաժան միջոցներով մանգաղուեցան եւ ոչնչացան: Իր պատմական հողին վրայ ապրող մեր ժողովուրդը թիրախ դարձաւ՝ գոհա-

ցում տալու խաւարի մէջ՝ պետականօրէն կազմակերպուած ոճիրի մը, որ չհանդուրժեց խաղաղ, բարգաւաճ, ստեղծագործ Քրիստոնեայ փոքրամասնութեան մը գոյութիւնը՝ իր պայպենական հողին վրայ:

Տեսախցիկներ չկային, ականատես ըլլալու մտրակուող պարտադիր տեղահանութեան: Լրատուամիջոցներ չկային, արձագանգելու «ազգի մը սպանութիւնը»: Շտապ օգնութեան միջոցներ չկային հասնելու համար փշոտ դաշտերուն մէջ, ժայռոտ լեռնային ճանապարհներու վրայ, անապատի կիզիչ աւազին, վտանգաւոր եւ ամալացած անմշակ ճամբաներուն վրայ եւ կամ մուխ ու սարսափազդու քարանձաւներու մէջ, մահուան սպառնալիքին ենթարկուող տեղահան ժողովուրդին: Շտապ օգնութեան չկար գլխաւոր երկունքի մէջ գտնուող մօր մը եւ կամ ոսկրացած որբ մահչուկի մը կոչին: Շտապ օգնութիւն չկար աղբսելու կաթիլ մը ջուր պապակող ակոսուած շրթներու եւ կամ հացի փշրանք մը հացցող նօթիին: Շտապ օգնութեան կոչերու պատասխանող չեղաւ փրկելու խեղդամահ մանկամարդուհի մը եւ կամ բոցերու մէջ կրակի տրուած հարս մը, որոնք ետ մղած էին լորձնաշուրթն ահագնողներ:

Այսօր՝ երախտագիտութեամբ կ'ողջունենք Ամերիկայի Միացեալ Նահանգներու Գոնկրէսի կողմէ երկա՛ր սպասուած Հայոց Յեղասպանութեան ճանաչումը, անցեալ տարուայ աշնան: Բայց հակառակ թաւալող մէկ դարաշրջանին, Մեծ Ոճիրի ժառանգորդները տակաւին մահաբունի մէջ կը մնան իրենց գիտակից ուրացութեամբ:



Այսօր՝ անոնք ալ կը տառապին նոյն թագաժահրով: Իմ աղօթքն ու մաղթանքն է, որ ինչպէս ամբողջ աշխարհը, գիտակից ուրացումի ռահվիրան՝ Թուրքիան, նոյնպէս ապաքինի այս հիւանդութեան հետեւանքով յառաջացած աւերէն եւ հոգեվարքէն եւ խաղաղութիւն գտնէ:

Ամէն բանի ժամանակը կայ կ'ըսէ Աստուածաշունչը:

Այսօր ես առաջնորդուած եմ Աստուծոյ Խօսքով՝ Բ. Օրինաց 32. 35 համարով, որ կ'ըսէ. - «Վրժարուր իմս է, ես պիտի հատուցանեմ»:

Ամէն բանի ժամանակը կայ:

Այսօր ժամանակն է խոնարհելու եւ մեր յարգանքի տուրք մատուցանելու ինկածներուն՝ վերահաստատելով մեր հաւաքական ձգտումը արդարութեան:

\* Զաւեն Խանճեան Գործադիր Տնօրէնն է Ամերիկայի Դայ Աւետարանչական Ընկերակցութեան

# Եղեռնը՝ մեր Գեղարուեստական Արձակին մէջ

## ՍԱՐԳԻՍ ՎԱՅՍԱԳՆ

Եղեռնը հայ գրականութեան մէջ, ցարդ չունեցաւ իր ահագնութեան տարողութիւնը ընդգրկող գրական նուաճումներ, ըլլալ բովանդակութեան լայնածիր, ամբողջական սեւեռումով եւ գեղարուեստական բարձր մշակումով: Գրեթէ վերջին հարիւրամեակի իւրաքանչիւր հայ գրողի գործերուն մէջ սակայն, ան ցաւազնիօրէն մնաց որպէս տեւական ներկայութիւն ու յաճախանք, մղձաւանջ ու մտատանջութիւն, եւ կոտորացող կակճանք որպէս, իր լուռ կամ խօսուն, բայց միշտ ներգործող հետեւանքներով կամ ազդեցութեանը, բայց երբե՛ք չհասարակատարել իրագործումի բարձրութեան: Նոյնիսկ, ընդհակառակը, այդ անկարողութիւնը յաճախ պատճառ դարձաւ ամբողջական կամ աւելի ճիշդը՝ կաշկանդումի, դատապարտուած հոգեկան կայանքի: Այս վրիպանքին բացատրութիւնը անպայման տաղանդի պակասը չէր. Տաղանդներ միշտ ալ ունեցած ենք. Զապել Եսայեան, Յակոբ Օշական, Թէքէեան, Կոստան Զարեան ու Օտեան, ապա՝ Մահարի, Համաստեղ, Սիւրմէլեան, Շահնուր, Շուշանեան ու Որբունի եւ Ալաճաճեան ու Մառուկեան, «Աւերակներուն վրայ»էն մինչեւ «Մէրը Եղեռնին Մէջ»ով փորձեցին սեւեռել Եղեռնը, բայց չյաջողեցան: Միայն անոր մասնակի երեսը բացառապէս կը կրցան, հիանալիօրէն պատկերելով Եղեռնի հետեւանքներն ու տեսական անդրադարձները սփիւռք դարձած մնացորդացիներ վրայ: Ճենճե-

րեցան մեր ողբերգութեամբ, բայց բուն Եղեռնը, բազմածաւալ իր խորութեամբ եւ խնկալի ծրարութեամբ, իր աներեւակայելի ծաւալով ու դաժան անմարդկութեամբ, գոհերուն անպատմելի արհաւիրքին ապրումներով մնաց աննուաճ: Մենք չկրցանք մեր ազգային նեղ մտաւրբնութեան ու գերգալնութիւնը շրջանցելով, համամարդկային լայն հորիզոնականութեան բերել կատարուածը եւ շաղկապել գալն արդի մարդկային գաղափարներուն եւ իտէպլներուն հետ: Տակաւին չկրցանք կուռ բովանդակութեան մը հետ նաեւ գեղարուեստական գրաւորութեամբ ու շարժումները գրաւել համաշխարհային գրական կարծիքին: Տրուատարել իրագործումի բարձրութեան: Նոյնիսկ, ընդհակառակը, այդ անկարողութիւնը յաճախ պատճառ դարձաւ ամբողջական կամ աւելի ճիշդը՝ կաշկանդումի, դատապարտուած հոգեկան կայանքի: Այս վրիպանքին բացատրութիւնը անպայման տաղանդի պակասը չէր. Տաղանդներ միշտ ալ ունեցած ենք. Զապել Եսայեան, Յակոբ Օշական, Թէքէեան, Կոստան Զարեան ու Օտեան, ապա՝ Մահարի, Համաստեղ, Սիւրմէլեան, Շահնուր, Շուշանեան ու Որբունի եւ Ալաճաճեան ու Մառուկեան, «Աւերակներուն վրայ»էն մինչեւ «Մէրը Եղեռնին Մէջ»ով փորձեցին սեւեռել Եղեռնը, բայց չյաջողեցան: Միայն անոր մասնակի երեսը բացառապէս կը կրցան, հիանալիօրէն պատկերելով Եղեռնի հետեւանքներն ու տեսական անդրադարձները սփիւռք դարձած մնացորդացիներ վրայ: Ճենճե-

կատարուածին ահաւորութեամբ: Շատ անգամ, նոյնիսկ չկարենալով ըմբռնել բազմութիւններու հլու, ոչխարային համակերպութիւնը, փորձեցին ընդվզիլ ու աչպանել կրաւորականութիւնը:

Այս երկու հոգեբանական կաշկանդուածութենէն գերծ օտարականին միայն վիճակուեցաւ ակնկալուած իրագործումը՝ յանձինս աւատրեացի հրեայ Ֆրանց Վերֆէլին, իր կոթողական «Մուսա Լեռան Քառասուն Օրերը» դիւցազնալէպով: Դժբախտաբար, արժատու հետեւորդներ չունենալով, ան մնաց եզակի երեւոյթ:

Վերֆէլի վէպը, ամէն բանէ առաջ, լիիրաւ գրականութիւն էր, միջավայրի, միջնորդող վարպետ ստեղծումով, ուր կը ծաւալէին լիարիւն հերոսներ, իրենց նկարագրի ուրոյն գիծերով եւ մանաւանդ հետզհետէ, դէպքերուն առնչութիւր կազմաւորուող մտածելակերպով եւ հոգեբանութեամբ: Առանց անապարանքի, հանդարտ դատողութեամբ, տրամաբանութեան կարծր լուսարձակներուն տակ, Վերֆէլ յառաջ կը տանէր գործողութիւնները, մասնիկ առ մասնիկ կերտելով նկարագրները, զարգացնելով դէպքերն ու գործողութիւնը, իր տրամաբանական լրումին հասցնելով վէպը, որ համաշխարհային հռչակի արժանացաւ իր ժամանակին եւ տակաւին կը շարունակէ հմայել նորանոր ընթերցողներ: Հոս ալ ծանրութեան կշիռը ընդվզումն է մուսալեռցիներուն, անոնց դիմադրական ոգին եւ ապրելու, գոյատեւելու անկապտելի կամքը: Վերֆէլ յաջողեցաւ

բարձր արուեստով աշխարհին ցոյց տալ, որ հայը լոկ մորթուող ոչխար չէ եւ ատակ է հերոսական իրագործումներ արձանագրելու:

Արդարեւ, մենք ալ, մեր կարգին, կրցանք, Վերֆէլին ստեղծած օրինակին հետեւելով, գոնէ, մեր ուրոյն դիցազնալէպերը երկնել մեր բազում քաղաքներուն ընդվզումները լիարժէք արուեստով գրականութեան բերել: Այս մարգէններս, Մահարիի «Այրող Այգեստանները», Ալաճաճեանի «Եղեռնները Զիտնարհուեցին»ը, Դաշտենցի «Խողեղան»ն ու «Ռանչպարներու կանչը» եւ Համաստեղի «Սպիտակ Զիւռուրը», իսկ վերջերս ալ Սարգիս Վահագնի «Հաճընը Սիրուն» վէպը, բարեբախտաբար ջարդ ու կոտորածի ողբասացութեանն անդին անցնելով, որոշ յաջողութեամբ կենդանացողին համատարած համակերպութեան դէմ ընդվզող խիզախումները ցեղին ընտրեալ հոգիներուն: Ճիշդ է, անոնք առաւելաբար եղան գոյամարտներու ներբողանքը՝ եղեռնի ստուերագծուած խորատարած քին վրայ, ու ջարդերու խուժուածութիւններն ու վաղթի համարժէք սեւեռումը մնաց չնուաճուած: Տանթէի մը վիթխարի տաղանդն ու խուզարկու խիզախումը պակասեցան անոնց: Որպէս իսկական մարդկային էակներ, անոնք չկրցան համապարփակ ընդգրկել անմարդկայինը:

Նորագոյն փորձերէն պէտք է յիշատակել Անդրանիկ Մառուկեանի «Մէրը Եղեռնին մէջ»ը, գոր իրեն յատուկ առոյգ ոճով, «Թուղթ Առ Երեւանի հեղինակը վրձինեց

# 230 Տարեկան Մատեանը Հնատիպ Ձեռագ Շարականոցը Կ. Պոլիս 1790 Ի Հայրապետութեան Տեառն Ղուկասու Ամենայն Հայոց Կաթողիկոսին

ՂՈՎՏ. ՋՈՒԵՆ Ա. ՔՀՆՅ.  
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

### Մուտք

Հնատիպ 22 գիրքերու մէջ աչքառու է հնագոյնը՝ ժԼ դարու Ձեռագ Շարականոցը իր ետին գտնուող Յիշատակարանով, ինչպէս նաեւ Շարականոցին յաջորդ տպագրութիւնը 1850 թուին, երկուքն ալ տպագրուած Կ. Պոլիս: Երրորդ հրատարակութիւն մը եւս ունիմ երուսաղէմ հրատարակուած 1936 թուին: Ներկայ գրութեամբ կ'ուզեմ նախնագոյն տպագրուած Հայաստանեայց Եկեղեցու սոյն Շարականոցը ներկայացնել որ հաւանաբար գոյութիւն ունեցող հնագոյն տպագրութիւնն է դատելով իր յաւելեալ բացատրողական բովանդակութիւններէն, եւ մանաւանդ հնօրեայ մանրանկարչութեանց եւ խորաններու առաջին շատ նախնական տպագրեալ վերարտադրութիւններէն: Սրբագան այս մատեանը ունի իր հարազատ տախտակեայ կաշեպատ կողքն ու կազմը: Իմ կարծիքով Շարականոցի յետագայ հրատարակութիւնները հիմնուած են այս նախնագոյն Շարականոցին վրայ՝ իր հարազատ խազերով, այն տարբերութեամբ որ շատ բառեր սղուած են ու «պատիւ» ի նշաններով միայն ընթեռնելի որուն նպատակը յայտնապէս էջեր խնայելու պահանջքը եղած է:

### Հնատիպ Շարականոցը

230 տարիներ առաջ տպուած այս եկեղեցական մատեանը իր կատարեալ վիճակին մէջ հասած է ինծի 1955 թուականին, ոչ մէկ էջ ինկած ըլլալով 832 էջոցով 17x13x6 սմ. խորանարդ չափերով գիրքէն: Ծակատին գրուած է «Ի Հայրապետութեան Գերագահ Աթոռոյն Ս. էջմիածնի Տեառն Ղուկասու Սրբագան Կաթողիկոսի Ամենայն Հայոց», իշխելով նաեւ Երուսաղէմի Պատրիարքը «Տէր Յովակիմ Երջանկափայլ Վարդապետն ու Կ. Պոլսոյ Արքայանիստ քաղաքիս Տեառն Չաքարիս Ազգասէր եւ Կարդացեալ Աստուածաբան Պատրիարքը»: Տպագրութեան հայկական թուականը միայն տրուած է ՌՄԼԹ (Քրիստոսի 1790 թուականը), Նոյեմբերի ԺԱ (11) ի յաւելումով, «Ի տպարանի Յօհաննիսի եւ Պօղոսի»: Ղուկաս Կարնեցի Ամենայն Հայոց Կաթողիկոս գահակալած է 1780-1799:

Շարականոցը կը բացուի հեղինակներու անուններու շարքով մը, ոմանք աւանդաբար վերագրուած, եւ ուրիշներ ճշգրտութեամբ հաստատուած, երբեմն անորոշ ենթադրութիւններով, «ոմանք» այս անուն հեղինակին կողմէ, եւ «այլք»՝ ուրիշներու: Ամենէն յայտնին անոնցմէ անշուշտ Ս. Ներսէս Շնորհալի Կլայեցի Հայրապետն է որ գերագանց գրողն ու երգողը եղած է մեր շարականներուն, աւելի հին ժամանակներուն ալ՝ Կոմիտաս Աղցեցի Կաթողիկոսն ու Յովհաննէս Օձնեցի Հայրապետը: Նոյն էջին վրայ Շնորհալի Հայրապետի անուն կից որպէս իր յօրինումները յանուանէ կը կարդանք նուազագոյնը քսան շարականներ: Իսկ ընդհանուր հեղինակներու թիւը յանուանէ քսանմէկ արձանագրուած է: Անկախաբար առաջին էջի հեղինակներու ցանկէն, Շարականոցի վերջաւորութեան յատուկ ցանկով մը կրկնուած են հեղինակներուն անունները:



### Նկարագրողումները

Չարմանալի կը թուի թէ ինչպէս 230 տարի առաջ սոյն Շարականոցը գարդարած են հնօրեայ մեր ձեռագիր մատեաններու մանրանկարչութեանց տպագրեալ օրինակներով, խորաններով եւ լուսանցագրողներով, առաջինն անոնցմէ «սերունդներու ծառը», հաստաբուն եւ ճիւղաւորեալ ծառ մը, արմատներուն վրայ բազմած Աբրահամ, Իսահակ եւ Յակոբ Նահապետները, ու գագաթին՝ Աստուածամայրը մանուկ Յիսուսը գրկած: Ծառին նեքեւ բացատրական մըն ալ գրուած՝ «Ի նախահարց սերէ խմբից, ծնանի ծնողն փրկչից հանրից, նախապետ արք «իսահ» եւ յակ»:

Առաջին շարականին վերել ինքնատիպ ու տարաւորիչ խորան մը նկարուած է ուղղակի ձեռագիրներէն ընդօրինակուած, գոյգ մը հրեշտակներ փողերը բերաններուն, կը շեփորեն ծնունդը Փրկչին՝ կեդրոնական մեծադիր «է» գիրին շուրջ: Իսկ նոյն էջի լուսանցքին՝ գարդարուն աշտարակ մը՝ գագաթը խաչով պսակուած: Նման պատկերներ շատ յաճախադէպ են՝ ըստ տուեալ շարականի նիւթին ու բովանդակութեան: Հետաքրքրական է Բուն Բարեկենդանի «Բանն որ ընդ Հօր» շարականի նախորդ էջին Աղամ եւ Եւայի եւ գիտութեան ծառի լրիւ նկարը՝ կենդանիներու եւ ծառաստանի խճողուածքով, որուն ներքեւ կը կարդանք

### «յօձէն եւս եղեւ պատրեալ ուստի գպտուղն ճաշակեալ եւ ի դրախտն արտաբսեցեալ»:

### Խաղաղութիւնը

Շարականոցի ետին մանրամասն բովանդակութեան ցուցակէն ետք կը գտնենք ամէն բառի վրայ երեւցող խազերուն երաժշտական համարժէքը եղող շեշտաւորումներու ցանկը որոնք առանձինն կուտան եղանակին ճշգրտութիւնը: Յանկագրուած խազերուն անուններ տրուած են եւ հարկ էր անշուշտ միշտ լինել ու կրկնել անոնց ձայնային արժէքը ամէն անգամ որ անոնք կը կրկնուէին ըստ բառերուն վրայ անխտիր, ներկայացնելով շատ բժախնդիր եւ բարդ դրութիւն մը:

«Անուանց խազից շարականաց» վերնագրին տակ բացատրուած են շեշտերով, ոլորակներով, կրկնակներով, խէկործ եւ ձակործ նշաններով ու պարօղներով, ընդամէնը 24 խազեր, ճշգրտով անոնց դերն ու ձայնային համար-

ժէք եղանակը: Յետագային յայտնի երաժշտագէտներ մինչեւ Կոմիտաս Վարդապետ հետամուտ եղած են խազագրութեան եղանակներուն, վերլուծած գանոնք ու եւրպական ձայնագրութեամբ իրենց լրումին հասցուցած:

### Շարականներուն Ընդհանուր թիւը՝ 1812

Միայն նախնագոյն այս տպագրութեան մէջ կը կարդանք «Վասն թուոց շարականացն» վերնագրին տակ ճշգրիտ թիւը ամբողջ շարականներուն՝ անոնց ութ ձայներուն համաձայն: Յետագայ Շարականոցներուն մէջ չկայ այս պարզ թուացող տեղեկութիւնը որ ցարդ աննկատ թողուած է: Ով պիտի հաշուէր շարականներուն թիւը: Ահա այստեղ մինչ առանձին թիւերով արձանագրուած են Օրհնութիւնները, Հարցերն ու մնացեալները, եզրակացութեան մէջ գրուած է «լինին բովանդակ շարականք ՌՈՒԵ (1635), առաւել» Հարցք ճէէ (177), եւ միասնաբար ընդհանուր թիւը՝ ՌՊԺԲ (1812):

### Յիշատակարան

«Յիշատակարան տպողի» երկու էջերուն վրայ կը կարդանք պատմական եւ տեղագրական արժէք ներկայացնող Յիշատակարան մը՝ անուններով եւ աշխատակցութեամբ: Նախ բարեխօսութիւնը կը խնդրուի Սուրբ Մինասին «որ ետ կարողութիւն եւ յաջողութիւն

մեզ նուատիցս» կատարելութեան հասցնելու Շարականի սոյն վայելուչ տպագրութիւնը «ի վայելումն մաքուր մանկանց նորոյ սիրոնի»: Յիշատակարանին մէջ կը խնդրուի լինել «գհանգուցեալ հայրն իմ գմահտեսի Աստուածատուրն եւ գիս՝ գորդի նորին Յովհաննէս»: Նաեւ կը յիշատակուին տիրացու Պօղոսն ու տիրացու Յարութիւնը՝ Յովհաննէսի որդիները որոնք շարած են կապարեայ գիրերը: Այլ եւ Բալուցի Տիրատուրի որդին տիրացու Չաքարը: Յիշեալ Յովհաննէսն ու Պօղոսը տպարանատէրերն էին ինչպէս նշուած է մատեանին սկիզբը:

### Եզրակացութիւն

Հնատիպ այս Շարականոցը ինքնատիպ կը մնայ որքան ատեն որ յաջորդ տպագրութիւնները գանց առած են որոշ տեղեկութիւններ որոնք կարեւոր կը նկատուին: Այս կը նշանակէ նաեւ որ նախնագոյն հրատարակութիւններ անպայման ժամանակավրէպ չեն ըլլար, այլ կ'ընծայեն հնագոյն որոշ մանրամասնութիւններ որոնք կը հարստացնեն մեր գիտութիւնը: Մեր այս նկատողութիւնը կը հիմնենք այն իրողութեան վրայ երբ նկատուի կ'ունենանք վերջին հրատարակութիւնները որոնք իրենց աւելի փայլուն եւ աչքառու տեսքով կը հմայեն ընթերցողը եւ սակայն հնաբոյր էջերուն ընծայած միւս հմայքներէն զրկուած կը մնան:

## Եղեռնը՝ մեր Գեղարուեստական Արձակից մէջ

Շարունակուած էջ 14-էն

Եղեռնի մեծ զոհերէն Ռուբէն Սեւակի կեանքն ու նահատակութիւնը, դարձեալ, առանց յամենալու համատարած գաղթին ու Չարդերուն վրայ: Մէկ շունչով, քիչ մը հապճեպ մօտեցումով, առանց խորացումի գործ մը եղաւ այս երկն ալ: Անդրանիկ Անդրէասեանի եռահատոր «Փլուզում եւ Վերածնունդ» շարքը, բացառաբար, փորձեց տալ Չարդերուն եւ գաղթի դաժան արհաւիրքը սակայն ան ալ հակառակ իր ծաւալին, մնաց փորձի շրջագիծին մէջ, ոչ համոզիչ, մանրամասններուն մէջ խճճուած՝ բայց այլապէս օգտակար՝ վաւերութեամբ մը որպէս:

Սորացումի նոյն պակասով տառապեցաւ նաեւ Անթոնիա Արսլանի «Արտոյտներու Ազգարակ» վէպը, որ սակայն ունեցաւ Չարդերու բառմեցուցիչ տեսարանները պատկերելու բաւական իրապաշտ մօտեցում եւ յաջող սեւեռում: Գաղթի արիւնոտ ճանապարհն ալ, եթէ նկատի չառնենք անոնց հետ առնչուող վիպային արուեստական հիւստածքը, բաւական խօսուն եղան:

Ուրիշ ընդունելի փորձը պիտի գար Ֆրանսայէն, Ֆրանսերէնով գրող, բայց նախկին եգիպտաբնակ եւ ծագումով յոյն գրող ժիլպեռ Սինուէի «Երեւան» վէպով: Մօտ քսան հատորներու հեղինակ, ժիլպեռ Սինուէ, քաջածանօթ մեր պատմութեան, մեր կենցաղին ու մտայնութեան՝ հմտութեամբ եւ մեծ սիրով ձեռնարկած է տալ էրգրումի մէկ հայ ընտանիքի մը արիւնոտ Գողգոթան, եղելութիւններուն միահիւստելով պատմական դէպքերու եւ հանդիպումներու վճռորոշ տեսարաններ, (Պանք Օթոմանի գրաւում, Մոր-

կընթառ-թալաթի հանդիպում, թեհլերեանի պատանեկան ապրումները տառապալից եւ իր վրիժառութեան պսակումը՝ թալաթի սպաննութեամբ:) Դարձեալ, այս գործն ալ, մեծ յաւակնութիւններու արգասիք չէր կրնար ըլլալ, իր մակերեսայնութեամբ: Նպատակը բարի ու սիրոյ տուրք էր մեր ժողովուրդի տառապանքներուն հանդէպ, բայց տրուածը՝ ոչ զոհացուցիչ, նոյնիսկ գրական արժեքափի չհասած: Բայց տոկուն իրագործում մը՝ հայ դատին ու Եղեռնին ի նպաստ: Այս տեսակի ներդրումին ալ պէտք ունինք անշուշտ: Վերջին տասնամեակներուն, Ամերկային մէջ սկսաւ անգլերէնով պարզուիլ կարծէք նորաձեւութիւն դարձած երեւոյթ մըն ալ. քիչ թէ շատ անգլերէնի տիրացող օրիորդ կան տիկիները իրենց ձանձրոյթը փարսեղուելու եւ կամ փառասիրութիւնը մշակելու մտօք սկսան իրենց մեծ մայրերուն յուշերը գրելու պատրուակով յուշավէպեր գրել Եղեռնի անձնական պատմութիւններով, առանց բնաւ հասնելու գրական նուազագոյն արժանիքներու:

Հոս պէտք է վերջապէս շեշտել, թէ լայնահուն, խորացուած, բազմակողմանիօրէն ուսումնասիրուած եւ գրական իսկական տաղանդով յագեցուած վէպ կամ վիպաշարք ակնկալել, մեր դժուարին պայմաններուն մէջ հետզհետէ նօսրացող շարքերով, ոչ արհեստավարժ գրողներէն, պիտի ըլլար ոչ իրապաշտ մօտեցում մը, չըսելու համար՝ անկարելի: Կրնանք միմիայն յուսալ եւ մաղթել, որ հայրենի ծանօթ կացութեան բարելաւումով, ստեղծուին լաւագոյն պայմաններ եւ նոր սերունդի գրողներ ունենան կարելիութիւն ու տարանդը, վերջապէս երկնելու Մեծ Եղեռնին հազարութեան համագոր Մեծ մեր վէպը:

# Ճարակ(\*) Չեղաւ կամ՝ Արարիչն Արարածոց Սեգ Բարկացաւ Սկրտիչ Նաղաշ Բանաստեղծը եւ Միջագետքի Երկրորդ Համաճարակը 1469, Ամիդ Բաղաք

## ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ

Սրբազան հայրը իր պարտատուն փետրագրիչը դրաւ կաղամարի մէջ, դանդաղօրէն ելաւ իր կարմիր թաւեայ աթուռէն, ու խոհուն քայլերով անցաւ առաջնորդարանի հովոցը: Կամարակապ պատուհանէն վհատ աչքերով դիտեց ամայացած դաշտերը, գիւղերը, իր սիրելի Ամիդը, ապա Ս. Թէոդորոս կաթողիկէի գմբէթը, որու խաչը, քառաթեւ նշոյլ, մշտարթուն կը հսկէր քաղաքի վրայ ու վայելչօրէն ալ կը զարդարէր անոր ուրուագիծը: Ողբաց: Մահ էր ամենուրեք: Մարդկային անյարմար վիճակըստ կենսասէր առաջնորդ հօր, որ համբաւ կը վայելէր որպէս նաեւ զգայուն մանրանկարիչ եւ բանաստեղծ: Ինչ փորձանք է, մտածեց, Աստուած բորբոքեցաւ, դիեցիկ մայրեր որդեկորոյս՝ կը մորմոքին... Երկիրը հարուածող այդ չարագործ համաճարակին պատճառը փորձեց ըմբռնել: Երկնային պատիժ: Վանքերու եւ քաղաքներու մէջ բոցն դրած շուշապուրիներու, կաշառակերութիւններու հետեւա՞նք... Ալեգարդ սրբազանը, այժմ եօթանասուն տարեկան այր, գլուխը իր ձեռքերուն մէջ առաւ, ու Միջագետքի անշնչացած տարածութիւնը շրջահայելով մեղմ շշնջաց...

Արարիչն արարածոց մեզ բարկացաւ,  
Քաղցր բնութիւնն աստուածային մեզ դառնացաւ:

Այս օրերուն, յարգելի ընթերցող, երբ համաճարակ մը կը սպառնայ երկիր մոլորակի բնակիչներու առողջութիւնը, ու երբ աշխարհի տնտեսական եւ քաղաքական համակարգը գլխիվայր կը սուրայ




Սկրտիչ Նաղաշ

դէպի բեկման մը, յարմար կը տեսնեմ մտաբերել միջնադարեան հայ բանաստեղծ եւ մանրանկարիչ, Ամիդ մեծ քաղաքի առաջնորդ Մկրտիչ Նաղաշի այն ողբը, զոր գրի առեր է Միջագետքի երկրորդ՝ 1469 թուականի համաճարակի օրերուն: Երկարաշունչ է ան, 30 երկտող, ու կը պարունակէ սրտածմ լիկ տեսարաններ: Խոր վիշտով տեսնելով, թէ գոհերու մեծամասնութիւնը կը կազմեն անչափահասները՝ բանաստեղծը գայն անուաներ է «Ողբ վասն մանկանցն ննջեցելոցն»:

Ո՞վ էր հեղինակը՝ մարդասէր, կենսասէր եւ արուեստասէր այդ անձնաւորութիւնը: Թոյլ տուէք խօսիմ անոր կեանքի հանգամանքներու մասին ու մէջբերեմ ողբէ ընտիր երկտողեր:

Մկրտիչ Նաղաշը բնիկ Բաղէշցի էր, Պոռ գիւղէն: Կը կարծուի, թէ ծնած ըլլալ 1394 թուականին: Հայրը, Առաքելը, քահանայ է եղած:



Երուսաղէմի համաճարակը 1469

Շատ կանուխ տարիքին դրսեւորուեր են անոր բանաստեղծական եւ նկարչական ձիրքերը: Ուսաներ է իր ծննդավայրի Ս. Անանիա եւ Ս. Գեւորգ վանքերու մէջ: Ժամանակակիցները գինք կոչած են ,անհամեմատ նկարիչ»: Որպէս հմուտ նկարազարդող, արժանացած է «նաղաշ», ալիքն՝ նկարիչ մակդիրին: Կ'ամուսնանայ: Կը ծնի փոքրիկն Մեսրոպը: Դժբախտաբար, երիտասարդ տարիքին կը մահանայ կինը:

Եղուկ ու վայ հազար բերան զինչ գործեցաւ,

Ձի նորասէր հարսն ու փեսայն բաժանեցաւ:

Իր կնոջ մահէն յետոյ, 1420ականներուն, Մեսրոպի հետ կը տեղափոխուի Ամիդ: Կը ձեռնադրուի եպիսկոպոս: 1431 թուականին, ամիր Օսման բեկի իշխանութեան օրերուն, կը նշանակուի Միջագետքի հայոց հոգեւոր առաջնորդը:

Սուրն հրեղէն այսօր յերկիր տարածեցաւ,

Հուրն՝ ի տանէն աստուածային բորբոքեցաւ:


Բազմամարդ էր Ամիդը, բազմակրօն եւ բազմաշակոյթ: Նաղաշը իր մարդասիրութեամբ եւ մաքրակենցաղ վարքով կը վայելէ բոլորին, մանաւանդ՝ ամիրին համակրանքը: Անոր բարեացակամութեան շնորհիւ որոշ արսօնութիւններ ձեռք կը բերէ հայերու համար: Բեղուն շրջան է: Կը գրէ խրատական բանաստեղծութիւններ: Կը քարոզէ համամարդկային համերաշխութիւնը: Փրկագինով գերութենէ կ'ազատէ բազմաթիւ հայրենակիցներ: Բարենպաստ պայմանները կ'արտօնեն, որ 1439-1443 թուականներուն վերակառուցէ քաղաքի Ս. Թէոդորոս կաթողիկէն: Եկեղեցին կ'ունենայ նոր գմբէթ, որ իր բարձրութեամբ կը գերազանցէ քաղաքի մինարէները:

Լացէք այսօր եւ ողբացէք ամենքեան

Դառն արտասուօք հառաչեցէք դուք միաբան:

Բարձրագիր այդ գմբէթի տեսքը քաղաքի վրայ, պատճառ կ'ըլլայ, որ մոլեռանդ այլազգներ հալածանք սկսին եւ չարախօսին Նաղաշի դէմ: Օսման բեկի որդին, Համզան, նոր ամիրը, անհանդուրժող անձ, կը հրամայէ գմբէթը խոնարհեցնել:

Գեղեցկատիպ սարկաւազունքն քաղցրամայն,  
Որք կարդային գօրհանապազ սաղմոսարան,  
Որպէս ծաղկունք եկեղեցւոյ վայելչական,  
Այսօր անկեալ՝ ի հող մահու թանամեցան:



Ս. Թեոդորոս կաթողիկէ վանք

Ծանր կը վշտանայ առաջնորդը: Հրաժեշտ կու տայ Ամիդին: Նախ կ'երթայ Պոլիս, ապա Ղրիմի Թէոդոսիա քաղաքը: Չորս տարի ետք, Համզային յաջորդած է անոր որդին՝ ձիհանկիր միրզան: Լայնախոս ամիրի հրաւերով Նաղաշը կը վերադառնայ իր պաշտօնին: 1447 թուականին ալ Նեքամատ վարպետի ձեռքով կը վերակառուցէ Ս. Թէոդորոսը:

Քանի մանուկ մատաղատունկ ի հող դարձաւ,  
Եւ թէ քանի մայր որդեմեռ մոր-

մոքեցաւ:  
Անմեղ տղայքն ի հրեշտակէ խոցեալ լինին,  
Եւ թաւալին առջեւ ծնողացն ողորմագին:

Նաղաշը վերանորոգ, բուռն աշխատանքի կը ձեռնարկէ: Այս շրջանին կը ստեղծէ իր գրական լաւագոյն գործերը, առանց կասկածելու, թէ ինչ արհաւիրքներու յդի էր Միջագետքը: Կը քարոզէ հոգեւոր մաքուր կենցաղը եւ աշխարհի ունայնութիւնը, թէ սուտ է աշխարհը, երազ է ան, խաբուսիկ եւ անցողիկ, պէտք է խուսափիլ սին վայելքներէ, շուսյութենէ եւ փառասիրութենէ: Կոթողային է անոր ,Վասն ազահութեան խրատական բանաստեղծութիւնը. «... Ձինչ թագաւորք եւ մեծ իշխան, որ հեղելով չիրար կուտան, / Ձինչ որ արիւն չերկիր հեղան, ամէնն վասն ազահութեան»: Կենսասէր է ան: Քնարական եւ նուրբ տաղերով կը գովերգէ բնութեան գեղեցկութիւնը, ազնիւ փոխադարձ սէրը, սոխակը, վարդը:

Ձի գեղեցիկ եւ ճոխ պատկերքն մեռանին

Եւ սիրական որդիքն ի մօրէն բաժանին:

Աղէկ մանուկ, աղուոր պատկեր, արեւ նման,

Ունքն կամար, աչքն կանթղ երյանդիման:

Նաղաշն է առաջինը, որ հայկական քնարերգութեան մէջ գրեց պանդխտութեան բանաստեղծութիւններ: Ինք, թէ՛ պանդուխտ էր եղած եւ թէ՛ աքսորեալ: Ծանօթ է այդ տառապանքին. «... Հոգի՛, մի՛ սասեր դարիպ, թէ՛ չէ իմ սիրտը կ'արունի»:

1449 թուականին կը բռնկի Միջագետքի առաջին, իսկ 1469 թուականին՝ երկրորդ համաճարակը:

Արդ ո՞վ կարէ լեզուաւ պատմել զբան աղետին,  
Եւ զկսկիծն դառնութեա՛ գողըն սրտին:

Յոյժ աւերիչ եւ ցնցիչ է եղած երկրորդը՝ խլեր է անթիւ մանուկներու, «ազգի ազգի» անմեղներու

կեանքը:  
Մահու հրեշտակն անհեղակերպ գարիուրական,  
Ո՛չ ողորմի նոր փեսային եւ ո՛չ մանկան:

Մանուկն ելաց եւ հառաչեց, ճարակ չեղաւ...

Հայրն չկարաց փրկել գորդին իր սիրական:


Մահը, ըստ Մկրտիչ Նաղաշի, մարդու ողբերգութիւնն է, անյարմար վիճակ: Ճիշդ է, բանաստեղծը



# Ամերիկայի Միացեալ Նահանգների Դեսպան Յենրի Մորգընթաու-ի Յուշերը Թուրքիա-Կոնստանտինուպոլսոյ Այջ Պաշտօնավարած Ատեն 1913-1916 Թուականներին

## ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Վանի Ապստամբութիւնը Վան, Վանայ նահանգ-վիլայեթ, գտնուում է Արմինա-Հայաստանի «Օրինաց Երկիր Սրբազան-Լեոնաշխարհ»-ի արեւմտեան կողմում, սահմանակիցը Պարսք-Պարսկաստան երկրի: Տուշպա-Վան, Արամէ թագաւորի հիմնադրած Բիախինի-Արմինա երկրի մայր ոստանն էր: Պատմութեան կեղծարարներ այն համարում են «Ուրարտու» երկրի մայր ոստան: Գեղեցիկ է նահանգը, աղուոր է Վանը, անուշ է Հայկական արարչական Լեոնաշխարհը: Արմինա-Հայերի հազար-հազար տարիների՝ Հարք, Արատտա, Արմանի, Արմէ-Շուպրիա, Սուբիր-Սուբարտու, Միտաննի, Արամէ թագաւորի Բիախինի-Արմինա երկրներ, յետագայի Երուանդունի, Արտաշէսեան, Արշակունի, Բագրատունի, երկրների թագաւորների Արմինա-Հայաստան աշխարհ: Հողն է բերրի, Արմին-Հայերի լեցուն արարուածներ, բարգաւաճում, առատութիւն, լոյս, արեւ էր այնտեղ: Առաջին մարդու ծննդավայր Եդեմն էր այնտեղ: Վան քաղաքը՝ համանուն նահանգի գլխաւոր քաղաքն էր, փռուած Վանայ-Բզնունեանց ծովի ափերին: Նրան իրենց ափերի վրայ էին պահել հազար-հազար դարեր առաջ իրենց գագաթներից հուր ժայթքած Վարագ, Թոնտուրեկ, Արտոս, Սիփան, Նեմրութ լեռները: Նրանց գագաթների կրակ լոյսն էր լցուել Վանայ ծովին, վառուել էին ջրերը, աստուածների երկունք եղել այնտեղ, աստուածներ ծնունդ եղել այնտեղ՝ Վահագնի Մոնունը: Մովի ջրերից յառնած ժայռաբլուրին՝ աշխարհին Արմին-Հայ ցեղի հանճարի լոյսը վառող Ախթամարի վեհաշուք տաճարն է կանգնած, առանց իր գագաթին... խաչի: Վան քաղաքը, Արմին-Հայերի Շւինի արեւ աստուծոյ կին՝ Տուշպուհ-ի անունով նախկինում Տուշպ կոչուել: Քաղաքը կառուցուել էր Արմինա-Ուրարտու Արարտունիների Արա-Արայան գահատոհմի Նաիրի-Բիախինի Արմինա երկրի արքայ՝ Սարգուրի Ա. կողմից: Չքնաղ է եղել Տուշպան, նրան հսկում էին բարձր ու սեպածեւ ժայռերի վրայ բազմած անհասանելի միջնաբերդը, շրջապատուած քարաշէն պարիսպով, որի պատերին դեռեւս ընթեռնելի է Սարգուրի արքայի բազմատող արձանագրութիւնը:



կան կարեւոր կեդրոն էր: Կառավարութիւնը նրա Հայ բնակչութեան նկատմամբ կասկածանք տածել: Ենթադրել էին, եթէ Ռուսիան թուրքիա արշաւէր, իրենց երթի յարմարագոյն ճամբան այդ նահանգով պիտի անցնէր: 1914 թ. պատերազմի սկզբին, Վանում եւ այլուր, բանակի համար իրեղէններու բռնագրաւումներ կատարուել, որոնք աւելի դաժան եղել քրիստոնեաների, քան իսլամների հանդէպ: Հայերը թողել էին, որ սպաները տանէին իրենց ամբողջ ընտանի անասունները, պարենը եւ ուրիշ ունեցուածքները, որոնց փոխարէնը ստացել էին արժէզրկուած թղթադրամներ:

Բանակ զօրակոչուած Հայ զիւղորների նկատմամբ վայրագ վարուելակերպ եղել, հալածանք ու հարստահարութիւններ՝ մասնաւորապէս Հայ բնակչութեան եւ նաեւ այլ քրիստոնեայ մարդկանց հանդէպ: Թուրք պաշտօնեաներ ամբաստանել էին հայերին, որ Կովկասեան ճակատում իրենց կրած պարտութիւնների պատճառները իրենք էին: Երկիրդի ու վախի մթնոլորտ էին ստեղծել Վան քաղաքում ու նահանգում: Անդրկովկասի ռուսական բանակի զինուորների մեծ մասը Հայ զինուորներից բաղկացած լինելը զայրացրել էր թուրքին: Նրանք հաշուի չէին առել, որ հայերը ցարի հպատակներն էին հանդիսանում եւ նաեւ ռուս մարդու նման պարտաւոր էին զինուորագրուելու նրանց պատերազմին: Թուրքը ամբաստանում էր հայերին, որ իբր Վանայ եւ ուրիշ նահանգների զինապարտութեան ենթակայ անձանց մեծ մասը դասալիք էին եղել, հատել երկրի սահմանը, միացել Ռուս պետութեան բանակին, որը իբր այդ պատճառ հանդիսացել կովկասեան ռազմաճակատում իրենց կրած պարտութեանը: Դեսպան Հ. Մորգընթաուն, նման տեղեկութիւնը հաստատուած չի համարել, թէ եւ անհաւանական չի գտել մի քանի հարիւր մարդկանց դասալքութիւնը: «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կոմիտէի գործակալները Վան ու էրզրում էին ժամանել, առաջարկել մի քանի հայեր Ռուսահայաստան գնալին՝ այնտեղ ցարի կառավարութեան դէմ ապստամբութիւն կազմակերպելին: Հայերը մերժել էին նման առաջարկը: Թուրք կառավարութիւնը այդ դաւաճանութիւն էր համարել եւ այն նաեւ որպէս չքմեղանք ներկայացրել Հայ ազգի մարդկանց հանդէպ իրենց վերաբերմունքին: Այդ պատերազմում էր Օսմանեան նկարագրի վատթարութիւնը՝ գրել էր դեսպան Հ. Մորգընթաուն:

Անցած երեսուն տարիներին

հարիւր հազարաւորներ ջարդած, կողոպտած, խոշտանքած, նրանց կանանց ու աղջիկներին անպատուած, թուրքը ցանկանում էր հայերի ամէնակատարեալ ուղղամտութիւնը իրենց հանդէպ: Գաղտնիք չէր, որ հայերը համակիր էին պատերազմում Համաձայնողականների (Անդանտ) դաշինքի պետութիւններին: Պետական ոճիր էր համարուել Հայ զինուորի դասալքութիւնը, արժանի պատճուելու սարսափելի կերպով: Իրենց տարագրութեան հրովարտակ ստացած, Մուսա Լերան բարձունքներին թուրքի դէմ ճակատամարտի ելած կռուող մարդկանցից ոմանք թրքական զօրանոցներից փախած դասալիք զինուորներ էին:

1914 թուականին, մասնաւորապէս 1915-ի սկզբին Վանում ու այլուր ծանր խոշտանքումների դէպքեր էին պատահել, հայերը իրենց գուսպ էին պահել: Թուրքերի քաղաքականութիւնն էր հայերի ապստամբութիւնը գրգռելու, որ այն դառնար հայերի կոտորածների չքմեղացուցիչ պատրուակ: Հայ կղերը ու քաղաքական առաջնորդները ժողովուրդին հանդարտութեան կոչ արել, յանձնարարել հանդուրժել նրանց ծայրայեղ արարքները, որ թուրքին չտային իրենց ցանկացած առիթը: Եթէ նոյնիսկ գաւառի գիւղերից մի քանիսը կրակի տային, վրէժի չդիմէին, աւելի լաւ էին համարել փոքր թուով չէնք քանդուէին, քան ամբողջ ազգը սպանուէր: Ո՛չ, գէնքով վրէժ պիտի լուծէին, որ յետոյ էլ ամբողջ ազգը չսպանուէր:



Պոլսոյ կառավարական դահլիճի անօրէն մարդիկ, եթէ կարելի է նրանց մարդ անուանել, պաշտօնակն էին արել Վանի Կառավարիչ Թահսին փաշան, նրա փոխարէն նշանակել էնվէրի քեռայր՝ ձեւտէթ պէյը (քրոջ ամուսին): Վանի աւագանին, մտահոգիչ կարգադրութիւն էր համարել այդ: Երկրի պաշտօնական ներկայացուցիչներում պատահել մարդկանց մի փոքրամասնութիւն, որոնք ընդիմացել էին, որ սպանութիւնը պետական քաղաքականութիւն լինէր: Մերժել էին գործադրել պետական արիւնտուշտ հրամանները:

Օսմանեան թուրք պետութիւնը, կոտորածներ կազմակերպելուց առաջ, սովորութիւն էր դարձրել իրենց զբաղեցրած պաշտօններից հեռացնել վստահութիւն չվայելող պաշտօնատարները, նրանց փոխարինել հնազանդ սպասաւորներով: Վրդովեցուցիչ էին համարել, կեանքին մի մասը Վանայ մէջ

անցկացրած, հոգին իր ցեղին յուսեցուն աւանդութիւններով լեցուն, կեղծաւոր, նենգամիտ եւ վայրագ նման մի թուրք մարդու Վանում պաշտօնի կոչելը: Նա ասում էր հայերին, իրենց ազգայնական, քաղաքական խնդիրը լուծելու միտքը հաճոյ էր իրեն: Իթիհատական ոհմակի դահլիճից հրահանգներ էր ստացել իր պաշտօնավարած նահանգի մէջ լուծելու հայերը բնաջնջելու հարցը: Սակայն, այն իրագործելու դիւրին նախադրեալներ չկային: ձեւտէթը կովկասում մարտնչել էր Ռուսական բանակների դէմ: Պատերազմական գործողութիւնների ճախողումը ու Ռուսական բանակի Վանին մօտենալը նկատելով, առ ի խոհեմութիւն հրամայել էին վատ չվարուել տեղի հայերի հետ:

1915 թուականի գարնան սկզբներին, Ռուսական բանակը ռազմաճակատից ետ էր քաշուել: Թուրքի համար բարեբախտութիւն էր այդ, հայերը գրկուում էին իրենց պաշտպաններից: Ռազմաճակատի նման իրադրութեան պայմաններում՝ հայերը թուրքի հալածանքի ենթակայ պիտի դառնային: Խախտելով ռազմավարական խնդրի ընդունուած կարգը, նահանջող թշնամուն հետապնդելու փոխարէն, թուրքի զօրագունդերը լքել էին դիրքերը, արշաւել երկրի սեփական տարածքի տարբեր կողմեր: Նրանք իրենց գէնքը ուղղել էին Վանի շրջակայ շէնքերի Հայ կիներու, մանուկներու, ծերունիների դէմ: Իրենց վայրենի վարուելակերպի համաձայն առեւանգել էին կանանց, կողոպտել ու այրել

Հայկական գիւղերը, օրեր շարունակ խողխողել տեղի բնակչութիւնը:

1915 թուականի Ապրիլ ամսուայ 15-ին, 500 երիտասարդների կանչել էին ներկայանալու զօրակայան, մայրամուտից առաջ նրանց քաղաքից դուրս տարել՝ անգթօրէն սպաննել: Իրենց կրօնն էր այդ արտօնում, վայրի բնագրով Օղուզ ցեղի թուրք մարդկանց սրտերին իրենց աստուածը գուլ չէր հոսել: Նոյն խժոժութիւնները կատարել էին Վանայ ծովի հիւսիսի մարզում գտնուող 80 գիւղերում, երեք օրերի ընթացքում ամէնասանարգ ձեւով 24000 հայեր սպաննել:

ձեւտէթ, իր նոր պաշտօնատեղի՝ Վան, վերադառնալուց յետոյ պահանջել էր, որ հայերը 4000 զինուոր տրամադրէին իրեն: Հաշուի առնելով անցեալին պատահած դէպքերը, հայերը տրամադրի չէին

# Ամերիկայի Միացեալ Նահանգների Դեսպան Դենրի Մորգընթաու-ի Յուշերը

Շարունակուած էջ 17-էն

եղել նրա պահանջը կատարելու: Ճեւտէթ, Պոլիսից իրեն եկած հրահանգների համաձայն՝ ծրագրել էր բնաջնջել քաղաքի ամբողջ Հայ բնակչութիւնը: 4000 քաջառողջ մարդիկ պահանջելով, մտադրուել էր նրանց սպանել՝ հայերին ինքնապաշտպանութիւնից զրկելու համար: Հայերը, ժամանակ չհասնելու համար բանակցութիւններ էին վարել նրանց հետ՝ առաջարկել գէնք կրելու ատակ 500 մարդկանց տրամադրել, մնացածի համար փրկագին վճարել: Ճեւտէթ, ապստամբութեան տրամադրութեան մասին իմանալով, որոշել էր խեղդել այն: Յայտարարել էր, որ «Եթէ ապստամբները հրացանի մէկ հարուած արձակեն, պիտի սպաննեմ բոլոր քրիստոնեաները՝ այլ, կին թէ մանուկ, մինչեւ ամէնէն պզտիկները» իր վիրաւոր ծունկին էր ցոյց տուել: Թուրքերը Հայկական թաղին շուրջ խրամներ էին բացել, այնտեղ գինուորներ տեղակայել: Ի պատասխան այդ գրգռութիւններին, հայերը սկսել էին պաշտպանուելու պատրաստութիւններ տեսնել:

Ապրիլի 20-ին, թուրք զինուորական ջոկատը, Վան մեկնող Հայ կիներ բռնել, սպաննել նրանց ու օգնութեան փութացող երկու հայերի: Թուրքերը, հրացանով ու հրետանով կրակ էին բացել հայոց արուարձանների վրայ, քաղաքի մեծ մասը բռնուել էր բոցերով: Կանոնաւոր պաշարում էր կազմակերպուել: Հայերի կռուող ուժի թուաքանակը կազմում էր 1500 մարդ: Նրանք միայն 300 «Քառապին» գէնքեր ունէին եւ անբաւարար չափով բազմաբախի պաշար: Ճեւտէթի բանակը բաղկացած էր կատարելապէս զինուած եւ լաւ պարենաւորուած, 5000 զինուորներով: Մինչեւ Հ. Մորգընթաուի Վանի հերոսամարտի մասին իր անկեղծ ու հիացմունքով գեղուն գնահատանքի խօսքը մէջ բերելու, ստորեւ պիտի շարունակեմ նկարագրել հերոսամարտի ընթացքը, նա այն մանրամասն չի յիշատակել իր յուշերում, խոստովանելով, որ իր խօսքով ասած, «Չեմ յաւակնիր իբր զինուորական պատմագիր մը ըլլալ»:

Հայի Նահապետ, կռոււմ սպաննեց իր երկիր նուաճելու եկած թշնամու առաջնորդին, յաղթական կռուով իր աղիւսի ազատութիւն շնորհեց: Նախիր՝ կրակի երկիր, արի մարդիկ աստուածացորին նրան, համբարձեց երկինք, աստղեր հաւաքուցեցին նրա շուրջ՝ «Հայիկ Համաստեղութիւն» եղաւ: Հազար-հազար տարիներ, Արմին-հայերի սրտերում նա ոգի դարձած, մարմնացաւ իր աղիւսի յետնորդների հոգիներում, ոչ ոք կարողացաւ սպաննել այն, մինչեւ որ դրացի երկու խոշոր երկիրներ իրենց զարմից Արմինա աշխարհին թագաւոր բերին: Փլուցեցին Արմինա աշխարհի տանեակ հազար դարերի Արմա-Արմին արարչական ցեղի թագաւորական տոհմերի գահակալութիւնները: Սպաննեցին իրենց հաւատքի իմաստութիւնը, սպաննեցին իրենց աստուածներին: Անյիշելի ժամանակներից նրանք ցեղի առաջնորդներ էին եղել, որոնց անչափ սիրելուց աստուածացրել էին:

Անապատների, տափաստանների դաժանութիւնը իրենց հոգիներում, մի անօրէն Ողուզ-թուրք

(թուրքիկ լեզուով խօսող ցեղի մարդիկ) իրենց դրօշին գայլ, արշաւել էին աղուոր երկրներ, յափշտակել ուրիշի արարում, տիրել նրանց շէներին: Հասել էին արմինների Աստուածաստեղծ «Եղեմ» բարգաւած երկիր: Բիւզանդիոնի ամբարշտ կայսրերի հազար խարդաւանքներով, տկարացրել էին Հայաստան երկրի ներուժը, քանդել այն հզօր պատուարը, որ իրենց էլ պաշտպանական ամրութիւնը պիտի լինէր: Այդ ինչպէ՞ս էր, որ Արմին-հայերի նոր հաւատքի աստուածը թողել, որ նրանք տիրէին իր արարած Եղեմի երկրին . . . օտարի Աստուածն էր նա: Տիրեցին անողոք դաժանութեամբ, յափշտակեցին նրանց արարումը, պղծեցին նրանց տաճարները, ստորացրին նրանց արժանապատուութիւնը, սպաննեցին նրանց ազատ կամքը, կործանեցին նրանց մայր ուստանը, մարեցին նրանց մշակների հորովէները, մանչերին տարաւ:

Օտար ցեղի մարդու թագաւորած Արմինա-Հայաստան երկիր, իրենց նոր հաւատքի «Տէր»-ն ու նրա «Որդին» հրամայել էին Արմին աղիւսին հնազանդիլ տիրոջը: Ո՞վ էր այդ «Տէր»ը, ուրիշի «Աստուած»ու նրա «Որդի»-ն էին իրենց երկիր բերել, փրկել արմինների բնիկ աստուածների մեհեանները, մարել նրանց տոհմական հաւատքի լոյսը, նրանց փրած որմերի վէմերից տաճարներ պատել, աւանդում են, որ միայն իրենց մայր ուստանում հազար ու մէկ եկեղեցիներ էին պատել: Հազար տարիներ հնազանդեցին, ինչքան հնազանդեցին, դուշմանը այնքան աւելի անողոք իշխեց: Հայու պաշտամունքի Աստուածը նաեւ այդքան չէր հնազանդի, հոգը չեղաւ նոյնիսկ նրանց մանուկների ցաւին:

Իրենց անցեալի փառաւոր ուստան՝ Տուշպա-Վանում, հազար-հազար Արմին-հայեր, Թահսին Փաշայի պաշտօնավարութեան ատեն, հանգիստ ու խաղաղ գոյակցում էին թուրք բնակչութեան հետ: Թուրքի նոր կառավարողներ, երկրում ազատութեան կեղծ հովեր ծածանած, գերմանների հետ կռուի էին ելել աշխարհի շատ պետութիւնների «Համաձայնողական» դաշինքի դէմ: Յարմար առիթ էին համարել սպաննելու Արմին-Հայ ցեղին: Նրանց դաշնակից գերմանների կայսրը հրամայել էր՝ միայն մէկ Արմին-Հայ կենդանի թողնել, այն էլ որպէս թանգարանային նմուշ: Գերմանները, այդ «նմուշը» հիմա տասնըներեք միլիոն է, աշխարհին իրենց իմաստութեան լոյսն են նորէն ճառագում: Ազատութիւն քարոզած «Իթիհատ»-ի նոր իշխողները հաւաքել էին հայոց գէնքերը, ազգի ազատութեան կռուին ելած «Ֆիտայի»-ներ իջել էին լեռներից: Չէնք-գէնքերը յանձնել թուրքին, Հայը հաւատաց թուրքին, այդ ի՞նչ աղէտ ... թէեւ անցել են հարիւր տարիներ, դեռ հիմա էլ արժի է լացել: Արմին-հայերի քաջերի-քաջ, իր կեանքի հաւատամքը թուրքի դէմ իր ազգի կռիւը դաւանած՝ Անդրանիկ Փաշային, Բուլղարիայից իրենց ժողովին բերած Հայ «մեծեր»-ը նրան առաջարկել էին գալ Թուրքիա, իրեն խոստացուած է «Չօրավար-Հազարապետի»-ի աստիճան շնորհել: Անդրանիկ, պատասխանելով, «Թուրքը կոտորելու է Հայ ցեղի մարդկանց եւ նաեւ Ձեզ բոլորիդ», հեռացել էր:

Հայերի համբերութեան ու

հնազանդութեան բաժակը փրփրում էր վրէժի լեցուն կրակով, կարմիր լոյս հոսում իրենց սրտերին: Տուշպա-Վանեցի Արմին-Հայը գէնք վերցրեց, Այգեստանը խրամատեց, գէնք ճօճեց թուրքին, կրակ տեղաց յարձակուող թուրք զինուորի ու ասպատակ թուրք խուժանի վրայ: Վերջապէս, կռուով ելան մահ սփռելու դուշմանին, դրժեցին իրենց «Տիրոջ» հնազանդութեան պատուիրանը: Կովկասեան ճակատում, Ռուսի դէմ կռուող էնվերի բանակը Սարիղամիշում ջախջախուեց, ինստուն հազար թուրք ասկերներ սառեցին, մնացորդացը փախչում էր դէպի արեւմտեան կողմն իրենց զաւթած աշխարհի: Թուրքը իրենց պարտութեան պատճառը համարել էր Արմին-հայերի տաճած համակրանքը ուսուների հանդէպ: Իրենց նահանջի ճանապարհին, թուրքը ու իրեն միացած թալանչի-ընչաքաղց, վայրենաբարոյ լեռնական քիւրտը՝ «քուրտը, քուրտը գիտե՞ս ... «ասում էին Հայ մայրեր, մահմետական խուժանը կողոպտում, հրդեհում արեւմտեան կողմն հայոց աշխարհի շէները, սպաննում Արմին-Հայ անգէն բնակչութեանը:

Վանի գաւառ, լեցուն էր Արմին-հայերի շէներով ու հոծ բնակչութեամբ: Վասպուրականի Շատախ, Հայոց Ձոր, Ալջախագ, Արճեշ, Թիմար, Գյաւաշ, Կարճկան ինչպէս նաեւ առանձին գիւղերում? Բելու, Աթանան, Ուլմ, Առեն, Ալյուր, Կեմ դիմել էին ինքնապաշտպանութեան, յամառ մարտեր էին մղել դուշմանի դէմ, վերջապէս իմացել, որ գէնքն էր փրկութիւն: Թէ՛ մարտերը, իրենց կռիւը մասնաւորապէս Տուշպա-Վանում էր, այն անընդհատ մէկ ամիս շարունակուել էր: Մինչ պատերազմը, Տուշպա-Վանում քսան երեք հազար հայեր էին, շրջակայ բնակավայրերից քաղաք ապաստանածների հետ միասին եօթանասուն հազար, բանակ, թէ մարտի ելած մարդիկ, որոնց գէնք տայիր, կը տիրէին ամբողջ արեւմտեան կողմն իրենց զաւթուած աշխարհի: «Ինչե՞ր ասես չէին անի» Արմին-Հայ մարդիկ: Վանի ու նրա գաւառի Արմին-հայերին սպաննելու համար, ապաշտոհ շնագայլ զինուորականի քեռայր Ճեւտէթ հրահանգ ունէր՝ իր քրոջ ամուսնուց ու նրա զինակից շների վոսմակից, բնաջնջելու Վանի ու նրա շրջակայ հազար-հազար տարիների արարչական ժամանակների շէների Արմին-Հայ բնակիչներին:

Ճեւտէթ, իր ծրագրերը իրականացնելու համար դիմել էր արեւելքի շներին խաբէբայ, ստոր քայլի՝ խորհրդակցութեան համար հրաւիրել քաղաքի ակնառու Արմին-Հայ ղեկավարներից՝ թուրքի խորհրդարանի պատգամաւոր՝ Վոսմեանին (Օնիկ Գերձակեան), եւ իշխանին (Նիկողայոս Միքայելեան), որոնք տուն չվերադարձան ...: Արմին-հայեր, դուք չէ՞իք ընթերցել ձեր ցեղի պատմութիւնը, որ ձեր մեծերին սպաննելու համար պարտուողները միշտ էլ ձեզ հրաւիրում էին գալ խաղաղութիւն կայացնելու բանակցութիւնների: Այդպէս էր, որ Հոռովի Անտոնիոս զօրավարը, արեւելքի արքաների-արքայ Մեծն Տիգրանի որդի Արտավազդին հաշտութիւն կնքելու հրաւիրել, շղթայել, տարել իր տարփանոյ Կլոպատրային որպէս յաղթանակի նուշ մատուցել: Այդպէս էր, որ Բիւզանդիոնի կայսրը՝ Անի ուստանի թագաւոր պատանի

Գագիկ թագաւորին Բիւզանդիոն կանչել, չթողել վերադառնալ իր գահին: Այդպէս էր, որ երեսուն տարիների մղուած կռոււմ պարտուած նենգ պարսիկ Շապուհ թագաւորը, կեղրոնամետ իշխանութեան ազնուազարմ թագաւոր Արշակին տարել «Անուշ Բերդ», որտեղից ոչ ոք չէր վերադարձել:

Իրզրում քաղաքի կայսրօրից Վանի իր գօրքը համալրած Ճեւտէթը, իր ջոկատներով ու բազում արիւնակից հրոսակների համագործակցութեամբ, պաշարել էր Վանայ ուստանի Ագեստան թաղամասը, որտեղ կեղրոնացել էին Արմին-Հայ բնակչութեան մեծ մասը: Քանդուել էր կապը ուստանի քաղաքամիջի բնակիչների հետ: Ձէնքով կռուի ելած Արմին-հայերի ինքնապաշտպանութիւնը դեկավարելու համար կազմուել էր՝ Արմենականների, Հնչակեանների ու Դաշնակցականների միացեալ զինուորական մարմին, որի զինուորական մասի ղեկավարն էր արմենական՝ Արմենակ Եկարեանը, նախագահողը Արամ Մանուկեանը, անդամները՝ Հրանդ Գալիկեանը, Գաբրիել Սեմերճեանը, Փանոս Թերլէմէզեանը:

Ղեկավար մարմնի կռիւը սկսելու նախապատրաստական խորհրդակցութիւնում, գնահատելով նրա ծանր հանգամանքները, Արմենակ Եկարեանը դիմել էր ուստանի ինքնապաշտպաններին՝ «Վան առաջին անգամը չէ, որ ցոյց պիտի տայ իր համերաշխ ոգին ..... Այդ ոգին իր փառաւոր անցեալն ունի: Այս անգամ ալ պիտի տանինք այս կռիւը..... Ան մեզի պարտադրուեցաւ: Երկու ճամբայ ունինք, կա՛մ գլուխ ծռել բռնաւորին առջեւ – բնաջնջվիլ անպատիւ մահով – կա՛մ անվեհեր ու բաց ճակատ դուրս կալ անոր առջեւ նախընտրելով մեր նախնիներուն պատուաւոր ճամբան»: Տուշպա-Վանի մարդիկ ընտրեցին թուրքի դէմ կռուի պատուաւոր նուիրումը:

Թուրքի կանոնաւոր զօրքը կազմում էր՝ 10-12 հազար զինուոր, 12 թնդանօթ, Վանայ-Բզնունեանց ծովի նաւերը եւ բազմաքանակ հրոսակախումբը: Ուստանում կռուի ելած Արմին-հայերը 1500 հոգի էին, զինամթերքը այնքան քիչ, որ պատուիրուած էր կրակել միայն այն դէպքում՝ երբ վստահ կը լինէին արձակուած փամփուշտը անպայման կը խոցէր թուրքի սիրտը, ճակատը: Այգեստանի հինգ պաշտպանական շրջանների 73 դիրքերում կռուի ելել 1053 մարտիկներ, որոնք ունէին 505 հրացան ու 74 հազար փամփուշտ, 749 մաուզէր ու 39 հազար փամփուշտ: Կտրուած էր դրսի հետ հաղորդակցութեան կապը, դրսի օգնութիւնից զրկուած կռուի ելած Արմին-հայերը ցոյց տուցին բարձր կազմակերպուածութիւն, հնարամտութիւն: Ֆրանսա ուսանած քիմիագետ Միքայել Մինասեան – ուրիշ զինագործներ պատրաստել էին գէնք, վառօդ, փամփուշտ, նուսակ, Բուլղարացի Գրիգորը թնդանօթ էր ձուլել:

Կռիւը սկսել էր, 1915 թուականի Ապրիլի 7-ին, երբ Վարազ տանող ճամբան հսկող զինուորները, Ճեւտէթի հրահանգով գնդակոծել էին Շուշանեց գիւղից Այգեստան գնացող կանանց, առեւանգել, սպաննել նրանց, սկսել ուստանի թաղերից ու զօրանոցներից թուրք

### Հանրային Յեռուստարնկերութեան

Շարունակուած էջ 2-էն

Եւ դրա համար անհրաժեշտ է Հանրային հեռուստատեսութիւնը վստահել ոչ միայն գործի պրոֆէսիոնալներին, այլեւ՝ պետութեան եւ պետականութեան արժէքներին նուիրուած մարդկանց, նրանց, ովքեր չեն առաջնորդուած այսրոպեական շահերով, չեն գործում իշխանութեանը հաճոյանալու սկզբունքով, ինչպէս եղել է վերջին 20 տարիներին, այսինքն՝ պիտի որոշակի սկզբունքների կրող լինեն:

Թէ չէ Պետրոս Ղազարեանի տեղը այդ պաշտօնում ժամանակաւոր նշանակել են լրատուական հաղորդումների պրոդիւսեր Ռուբեն Շահինեանին, երբ բոլորն էլ գիտեն, որ նա Ալիկ Յարութիւնեանի կազմին է, Մարգարիտա Գրի-

գորեանին փոխարինած պրոդիւսեր Արմէն Սարգսեանը Հանրային հեռուստառադիօընկերութեան խորհրդի նախագահ Արա Շիրինեանի մտերիմ ընկերն է: Սա նորմալ է: Կը ստացուի, որ ընդամենը անձերի փոփոխութիւն է լինելու, այլ ոչ թէ՝ բովանդակութեան:

Գործող ընթացակարգերով պէտք է մրցոյթ լինի, որից Հանրային հեռուստառադիօընկերութեան խորհուրդը նոր տնօրէն է նշանակելու: Եթէ մրցոյթը ընդամենը թօղ փչելու համար է լինելու եւ Հանրայինի ղեկավարների հարցը քաւոր-սանիկ-մտերիմ սկզբունքով է լուծուելու, աւելի լաւ է՝ հետ բերէք Պետրոս Ղազարեանին ու Մարգարիտա Գրիգորեանին: Տարբերութիւն չի լինելու:

«ՉՈՐՐՈՐԳ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

### Ամերիկայի Միացեալ Նահանգների Դեսպան

Շարունակուած էջ 18-էն

քերի յարձակումը: Այգեստանը ենթարկուել էր հեռուստատեսութեան, զգալի չափով աւերուածութիւն էր պատճառուել: Արմին-հայերը, իրենց նախնիների նման ամուրկանգել էին պաշտպանական դիրքերում: Կուռի առաջին օրը գրաւել էին թուրքի հեռագրատունը, պաշարել Հայկական թաղերի կեդրոնում գտնուող Համուդ աղայի գորանոցը: Բուլղարացի Գրիգորը ստորգետնեայ փորած ուղիով կատարել այդ գորանոցի պայթեցումը: «Անվահեր Հրաձիգ» կոչումին արժանացած՝ Տիրգրան Ալինճեանը (վարժապետ) պայթեցրել դուշմանի ոստիկանատունը: Կուռում խիզախ մարտիկները, պարգեւատրուել էին «Պատուոյ խաչ» շքանշանով, «Արծաթեայ խաչ»՝ («Հայցեղ» գրութիւնով):

Կուռը լաւ էր կազմակերպուել նաեւ քաղաքամիջում, որի քիչ թուով Արմին-հայերը ունեցել էին միայն 100 հրացան - 210 մատգէր, 30 հազար փամփուշտ: Քաղաքամիջում նաեւ կազմակերպուել էր գինուորական մարմին, որտեղ ընդգրկուել էին՝ Հայկազ Կոստեանը (ղեկավար) եւ այլ հայորդիներ, կեդրոնը՝ հայոց առաջնորդարանը, ստեղծուել էին «Մատակարար մարմին» եւ «Կարմիր խաչ» յանձնախումբեր: Քաղաքամիջի մարմինը եթակաջ էր Այգեստանի մարմինին, սակայն գործել էր ինքնուրոյն: Կուռի սկզբում, պաշտպանուել էին քաջին վայել սխրանքով, ոչնչացրել դուշմանի տարբեր ամրութիւններ: Ճեւտէթ պիտի խոստովանէր՝ «Կառավարութեան նամուսը քաղաքամիջում բաթմիշ էլաւ», այսինքն խորտակուեց:

Կուռի առաջին տասնօրեակի պատահարները հայերի օգտին էին: Չինուորական մարմինը Ապրիլի 16-ի իր կոչում ընդգծել էր կուռի ազատագրական բնոյթը եւ՝ «Պայքարը, զոր տաս օրէ ի վեր կը մղենք մեր անարգ թշնամու դէմ, մեր ազգային ազատագրութեան ամէնէն հոյակապ, ամէնէն նուիրական - ամէնէն աւելի ժողովրդական պայքարն է ... Մեր կուռը 600 տարիների բարբարոս ու շարժարար կառավարութեան դէմ է»: Ապստամբական կուռ, հայերի կոտորածները արդէն սկսած էին:

Կուռի երկրորդ տասնօրեակ-

նում նոյնպէս ահեղ մարտեր էին: Դուշմանը համալրում էր գործը ու սպառազինութիւնը, ու բազմաթիւ հայոց պաշտպանական դիրքերը: Ճեւտէթի գորաբանակը նոր յարձակում էր ձեռնարկել, յաջողութեան չհասնելով ու խոշոր կորուստներ կրելով նահանջել ելման դիրքեր: Արմին-հայերը ոգեշնչուած էին յաղթական կուռով, իրենց հերոսական դիմադրութիւնը ոգեւորել էր բոլորին, նոյնիսկ մանչերը ոչ միայն սուրհանդակներ էին դարձել այլ նաեւ պարեն ու փամփուշտ էին տանում պաշտպանական դիրքեր: Բանագնացների միջոցով կապ էին հաստատել դէպի վան կարշառղ ուսուական բանակի հետ: Փանոս Թերլէմէզեանը գրում էր՝ «Վանեցիները անհաւասար մարտում կուռում էին ատրճանակներով, որսի հրացաններով, դիմադրում էին Կրուպպի թնդանօթներին, որովհետեւ հաւատքն իրենց կուռքերին բրոնզէ պատնէշներ կրտել»:

Ապրիլի 28-ին դուշմանը նոր յարձակում էր կազմակերպել, Արմին-Հայը դիրքերում ամուր կանգնած էր՝ ոչ մէկ թիգ էր նահանջել: Ճարահատ թուրքը ձեռնարկել էր Հայկական թաղերի ու բազմաթիւնը, 16 հազար արկ էին նետել: Չէին կարողացել ընկճել Արմին-Հայ պաշտպաններին: Թուրք հրետանին վարող գերմանացի սպան պիտի գրէր՝ «Ինչ կենսունակ մարդիկ էին սա հայերը. մենք քանդելով, անոս շինելով, չկրցանք իրենց հասնիլ»:

Երբ թուրքերը իմացել էին, որ ուսական բանակը եւ Հայ կամաւորական գունդերը մօտենում էին վանին, վախկոտ թուրքը ... իրար անցած փախնում էր քաղաքից: Մայիսի 3-ին, ազատագրուել էր վանը, մարտիկները հրդեհել էին դուշմանի վերջին յենակէտ՝ Հաջի-Բեքիրի գորանոցը, հազար տարիներ յետոյ, հայոց դրօշակը նորէն ծածանուած էր բերդի գագաթին: Վանայ ծովի ալեակները իրար գրկելով ուրախ աղմկում էին, աւետում էին իրենց արիւնքին Արմին-հայերի ոգու մի նոր յաղթանակի բերկրանքը: Վանը իրենց գրկին պահող վարազայ, Նեմրութ, Սիփան, Արտոս, Թոնտուրեկ լեռների գագաթների յանգած հրաբուխները՝ իրենց պայթեցումի որոտներով, կարմիր կրակ լաւայի ժայթքով, արդեօք չէ՞ին

### Ճարակ(\*) Չեղաւ

Շարունակուած էջ 16-էն

խօսեր է մահուան մասին, բայց ո՛չ աղաղակելով, այլ՝ գեղագիտական շունչով, քրիստոնէական հեզուութեամբ եւ հանդարտութեամբ: Ողբը գրի առեր է 1469 թուականին՝ երկրորդ համաճարակի օրերուն: Հոգեւոր հովիւը, որ ականատեսն էր իր հօտին վիճակած ճակատագրին, յաջորդ տարի, (հաւանաբար) ի՛նք զո՛հ կ'երթայ այդ պատուհասին: Հետեւեալ քառեակը, կարծես, թէ կենսագրական է.

Գեղեցկագեղ գոյնն երեսին թանանցաւ

Եւ ծովային աչքն 'ի լուսոյ պակասեցաւ:

Եւ վայելուչ զօրեղ բազուկն թուլացաւ,

Լար արծաթոյ ոսկի մանեակն մանրեցաւ:

Ողբը ունի երկտող մը, որ կարծես, թէ հրաժեշտի խօսքեր են.

...Բարով կացէ՛ք հարք եւ եղբարք,

Բարով կացէ՛ք իմ սիրելիք դուք

հաւասար:

Ս. Թէոդորոսի գմբէթէն ալ վեր, այժմ Տիրամայրը կը լսէ ողբի վերջաբանը: Ան բանաստեղծութիւն չէ, այլ՝ Չերմեռանդ աղօթքի մը մըմունջը.

Ամէն օրինեալ կոյս Մարիամ Աստուածածին,

Ձէնէհար մեր ննջեցեալքն 'ի քեզ յանձնին:

Արժան արա գմեզ անթառամ սուրբ պապկին,

Եւ քեզ ամէնքս երկրպագեմք կոյս Տիրածին:

Յարգելի ընթերցող, այս օրերուն, երբ դաժան համաճարակ մը կը ցնցէ աշխարհը ու կը սպառնայ կեանքը,

հազարաւոր անմեղներ արմատախիլ կ'ընէ, կը հեռացնէ աշխարհ կոչուած այս գեղեցիկ պարտէզէն,

յարմար կը տեսնեմ իւրաքանչեւ բանաստեղծի խօսքերով հրաժեշտ տալ յօղուածիս.

Բարով կացէ՛ք հարք եւ եղբարք,

Բարով կացէ՛ք իմ սիրելիք դուք հաւասար:

\* Ճար, դարման:


ողջոյնել բնիկների հերոսամարտի յաղթանակը:

Անդրանիկ Փաշայ, իր գունդով արշաւում էր հասնելու Վանի օգնութեան, Դիլմանում իր դէմ դուրս էր ելել թուրքի տասը հազարանոց բանակը: Փաշան շարքի բերել գունդը, գրոհել թուրքի դիրքերին: Ահեղ էր կուռը, Հայը ջախջախել է Վանի մարտին օգնութեան հասնելու իրենց ճանապարհին ելած թշնամուն: Սրբնթաց արշաւով առաջինը հասել Վան եւ Մայիսի 16-ին, Արա-Արայան գահատեղի Արմինայի Մարդուրի արքայի պարիսպի դարպասով մտել ոստան, նրան հետեւել էր Ռուսի բանակը: «Ամսօրեայ պայքարը, զոր տարանք փառքով ու պատուով, այսօր իր կատարելութեան մէջ կը վայելենք ..... բռնութիւնը Հայ գինուորի գնդակէն կը փախչի» գրել էր, ինքնապաշտպանութեան գինուորական մարմինը, Հայ ժողովուրդին ուղղուած դիմումի մէջ:

Ռուսը, իր երկրի քաղաքականութեան մուտք ծալքերով, կարճ ժամանակ յետոյ յայտարարել, որ էնպերի Չախջախուած բանակը իբր յարձակում է սկսել իրենց դէմ: Նահանջեց Ռուսի բանակը, իրենց հետ քայլեցին նաեւ թուրքի յոխորտանքը փլած Վանի ու Վասպուրականի հինգ հարիւր հազար Արմին-հայերը, ափսոս եղաւ: Հ. Մորզընթաուն իր յուշերում գրել է, որ Վանում հայերը պայքարել են մեծագոյն հերոսութեամբ, հրաշալի եղանակով: Ընդունել, որ գինուորական պատմագիր չլինելով

չէր կարող մանրամասն պատմել տեղի ունեցած բազմաթիւ անհատական հերոսութեան արարքները, կանանց գործակցութիւնը, մանուկների եռանդը, ամերիկացի միսիոնարների անձնուրացութիւնը եւ ուրիշ հազարաւոր պարագաներ, որոնք Հայաստանի պատմութեան փառաւոր էջերէն են: Մօտաւորապէս հինգ շաթաթ տեւող պայքարից յետոյ հայերը յաղթանակել էին, Ռուս բանակը երեւալուց յետոյ, թուրքերը փախել էին, սպաննել շրջակայ շէների մարդկանց: Ռուսները դիակիզել էին նահանգում սպանուած 55 հազար հայերի մարմինները: Հ. Մորզընթաուն նաեւ պիտի գրէր՝ «Վանի կուռի պատմականը ըրի, որովհետեւ այն եղաւ ազգ մը ամբողջ մեթոտիկ կերպով բնաջնջելու կազմակերպուած փորձի մը առաջին հանգրուանը»:

Հ. Մորզընթաուն իր յուշերում ակնարկելով՝ «Ես առիթը պիտի ունենամ վերստին խօսելու էնպերի, Թալեաթի եւ նրանց համախոհներուն մօտ իմ ըրած բարեխօսութիւնների մասին, ամէն անգամ որ ես թախանձէի իրենց՝ խնայել հայերուն, անոնք անփոփոխելիօրէն իբր օրինակ ինձի կը չիշատակէին՝ «Վանայ» օրինակը՝ որպէս Հայկական նենգամտութիւն: Այս պատմութիւնը կապացուցանէ, այդ հռչակաւոր ապստամբութիւնը ուրիշ բան չեղաւ, բացի ընդդիմութիւնը հայերու, որոնք վճռած էին փրկել իրենց կիներուն պատիւը ու իրենց կեանքը», գրել էր Հ. Մորզընթաուն:



NATIONAL NOTARY ASSOCIATION  
NOTARY PUBLIC

MEMBER

**Garine Depoyan**

626-755-4773

554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106

ghdepyan@gmail.com

*Donate meals, then share your story.*



A Covid-19 Response in Support of Feeding America, organized by the UACLA, the UYA and the AGC

**1.5 MILLION MEALS FOR 1.5 MILLION LIVES™**  
BY SURVIVORS OF THE ARMENIAN GENOCIDE



**PEOPLE IN AMERICA ARE FACING HUNGER**

**HOW CAN YOU HELP?**

In memory of the 1.5 million victims of the Armenian Genocide and in honor of the American Near East Relief effort which saved the Armenian Nation from total annihilation, we ask that you join us in expressing gratitude to the American People by donating meals to hungry families who are struggling through the current COVID-19 crisis.

As Armenian-Americans, we can play a crucial role in the vital humanitarian effort to meet the pandemic challenge at a community level by Feeding America.

**PLEASE PARTICIPATE IN OUR 10 MEALS PER \$1 DRIVE AND SHARE YOUR STORY WITH A VIDEO POST FOR APRIL 24**



**1.5 MILLION MEALS FOR 1.5 MILLION LIVES**  
BY SURVIVORS OF THE 1915 ARMENIAN GENOCIDE  
A Covid-19 Response in Support of Feeding America